



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

Ժե. Տարի - ԱՊՐԻԼ 1939 15^{me} Année - Avril 1939

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Կեանքի նորագութեան մէջ պտըտիլ (Ի. Յ. Արրահամեան) ..	42
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Ի՞նչ բանի վրայ խորհելու է (Թրգմ. Ն. Մ.) ..	51
— — Գաղտնիքը ուրախ կեանքին, Վեր. Ա. Զ. Եղոյեանի քարոզներէն (Հաւաքեց՝ Թագուհի Տէր Ղազարեան) ..	52
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Թագաւորութեան խորհուրդը (Scofieldէն) ..	53
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Անիկա ինձի՝ համար ալ մեռաւ — Ո՛ր է, ով մահ, քու խայթոցդ — Բանտին մէջ Զատիկ — Յարութիւն մեռելաց (Հաւաքեց՝ Վեր. Ժ. Կ. Պ.) ..	55
Հօրս Մահը (Սամուէլ Պ.) ..	56
ԼՈՒՍՍԱԲԱՆԱԿԱՆ — Հարց Ծաղմանց (Ամիրսիեց՝ Տ. Գ.) ..	57
ՃԷՅՄՍ ՀԸՏՍԸՆ ԹԷՅԼԸՐ — Զմեռը Տրէյնայտի մէջ (Թրգմ. Ն. Մ.) ..	59
ՊԱՏԱՆԵԱՅ — Ո՛չ հայր, միտին կը մեռնինք (**) ..	61
— Յիսուս վէմ անասան (Մ. Վէքիլեան) ..	62
ՄԱՆԿԱՆՑ — Գողգոթայի հրաւէլը (Ս. Գալայեան) ..	62
ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ — Սամուէլ եղբ. Պապաւաւեանի տեղեկագիրը (Սամուէլ Պ.) ..	63
ԵՐԳ — Իմ Բարեկամս (Թրգմ. Յ. Ն. Ղ.) ..	Կողքին Յրդ. Էջին վրայ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսագիրներ Թէեւ իրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ռ.պոյ՝ ճշմարիտ «Բան»ին
ներկայացողիչն ալ ջճանդար ու եւ յարմուանութիւն մը,
հարա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսագիրները կը հրատարակուի Մարտէյլի մէջ 16 էջերով (կողքէն զատ
անոր խմբագրական ժարմնին անդասներն են
վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, վեր. Ա. Ռ. ՓԱՓԱԶԱՆ, վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
ԲՐՈՓ. Դ. Դ. ԽԱՅԻԱՆՔԻՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենաթեւոյ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:
Յօդուածաւարտքեր միշտ որ ամբողջութիւնով խմբագրութեան
ձեռքը չհասնին, նկատի չեն աւելուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընծ եռնել եւ մեղմով գրուած
Թուղթին՝ մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապակելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ աւելու համար:

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
Բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի Յունուարին
եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱՅՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
Արտասահման Տուար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:
Յօդուածներ զրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆի
խսկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆի անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մտնողով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մտնողին վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արժնցի՛ր դուն
որ կը քնանաս, ես
կանգնե՛մ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Է. 14

Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մի ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԵ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1959

ԹԻԻ 4



ԿԵԱՆՔԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՊՏԸՏԻԼ

Անոր հետ Թաղուեցանք մկրտութիւնով մահուան
համար, որպէսզի ինչպէս Քրիստոս շօրը փառքովը
յարուածին առաւ մեռելներէն, այնպէս մենք
կեանքի նորոգութեան մէջ պտրտինք: Հռ. Զ. 4

ՉԱՏԿՈՒ ԱՆ տօնի առթիւ հաւատացեալնե-
րուն միտքը մասնաւորապէս կը յուզուի, Տէր
Յիսուսի մահուամբ և յարութեամբ կատարած
մեծ փրկութեա՛յ խորհուրդներով նաեւ սիրտն
ալ կը լեցուի անհուն ցնծութեամբ ու փառա-
բանութեամբ այդ մեծ փրկութիւնը իրենցը
ըրած ըլլալու վստահութեամբ: Անոնք հասկցած
են թէ Աստուած ի՛նչ մեծ սէր ցուցուցած է
Յիսուս Քրիստոսով, երբ իրենք, որպէս մեղաւոր
Անոր սիրոյն առջեւ իրենց սրտերը բացին:
Սակայն այս հաւատքը ամէն օրուան գործնական
կեանքի մէջ պէտք է ի յայտ գայ: Ինչո՞ւ Քրիս-
տոս մեռաւ և յարութիւն առաւ. չէ՞ որ, որպէսզի
մենք մեղքէն ազատինք և մեղքէ ազատ կեանքը
ապրինք: Ուստի Տէրոջը ուզածը այն է որ մենք
իրմով նոր կեանքը ունենանք և մասնաւորապէս
կեանքը ապրինք: Արդ, մեր նիւթով ոչ թէ
Քրիստոսի յարութիւնը, այլ Անոր յարութեան
զօրութեան գործնական արդիւնքը եղող նոր
կեանքը ունենալ և կեանքի նորոգութեան մէջ
պտրտինք է որ նկատի պիտի առնենք, հետեւե-
ալ երեք կէտերով, թէ ի՛նչ է կեանքի նորո-
գութիւնը, ի՛նչպէս կարելի է զայն ապրիլ և
ինչո՞ւ զայն ապրելու է:

Ա. Ի՛նչ է կեանքի նորոգութիւնը. — Տեսնենք
թէ ի՛նչ է կեանքի նորոգութիւնը ոչ թէ մտքով
զիտցած ըլլալու կամ որքան լաւ կերպով զայն
ըմբռնած ըլլալնիս իմանալու, այլ տեսնելու թէ
որքա՞ն զիտենք զայն գործնական կեանքով:

Հոս մեր համարին առաջին խօսքերը կ'ըսեն,

«Անոր հետ Թաղուեցանք մկրտութիւնով». ուրեմն
արդեօք կեանքի նորոգութիւնը մկրտութիւնն է:
Կան անանկներ որ ամբողջ կարեւորութիւնը
մկրտութեան վրայ կը դնեն, սեպելով թէ փր-
կութիւն և կեանքի նորոգութիւն ամէն ալ
մկրտութիւնն է: Բայց չմոռնանք, թէ մէկը
կրնայ մկրտուիլ և տակաւին կեանքի նորոգու-
թիւնը չունենալ: Աստուծոյ խօսքին ճշմարտու-
թիւնը լման ստրված կ'ըլլանք երբ առնենք զայն
իր ամբողջութիւնովը: Արդ, կը տեսնենք որ,
«Անոր հետ Թաղուեցանք մկրտութիւնով» խօսքին
շարունակութիւնն է, «մահուան համար»: Մկր-
տութիւնը իր կարեւոր նշանակութիւնը և անհրա-
ժեշտութիւնը ունի, վասնզի պարապ տեղը չէ
որ մեր Տէրը առաքեալներուն պատուիրեց Աե-
տարանը քարոզել և մկրտել հաւատացողները:
Սակայն մէկը քանի անգամ ալ մկրտուած ըլլալ
արժէք չունի, եթէ մկրտութեան նշանակու-
թիւնը իրականացուցած չէ կեանքով, այսինքն
մեղքին, հին մարդուն մեռած չէ: Կեանքի նորո-
գութիւնը ունենալու համար մեղքին մեռնիլ
անհրաժեշտ է: Մէկը որքան ատեն որ չէ մեռած,
հինն է որ կ'ապրի, սակայն երբ Քրիստոսի հետ
մեռնի, այն ատեն և միայն այն ատեն է որ նոր
կեանքը կ'ունենայ:

Ի՛նչ է Քրիստոսի հետ մեռնիլ. — Հաւատքով
ընդունիլ թէ Քրիստոս իմ մեղքերուս համար
մեռաւ և հաւատքով իմ անձս մեղքին մեռած
սեպել: Ահա՛ այն ատենն է որ Քրիստոսի հետ
ալ նոր կեանքի համար յարութիւն կ'առ-

նեմ: Բայց ինչէ՞ն պիտի գիտցուի թէ մէկը կեանքի նորոգութիւնը ունի թէ ոչ: Ասոր որոշ ապացոյցը իր ապրած կեանքն է. մէկը որ կեանքի նորոգութիւնը ունի, առաջուան ապրած կեանքը վերջ գտած է և բոլորովին տարբեր կեանք մը կ'ապրի. Յիսուս Քրիստոսով եղած նոր կեանքը: Իր անդամները այլեւս արգարութեան գործիքներ են Աստուծոյ և Տէրոջը փառք բերող բարի գործերը, Հոգիին պատուը ունի: Երբ մէկին համար կ'ըսենք թէ նոր հագուստ հագեր է, ըսել կ'ուզենք թէ առաջուան հինը հաներ է: Բայց եթէ հինն է որ կարկտեր է, որքան ալ հեռուէն նոր երեւնայ, տակաւին հինն է: Յաւալի է որ շատեր փոխանակ հին մարդուն մեռնելու, կարկտութիւն կ'ընեն և յետոյ պատուածքը աւելի զէշ կ'ըլլայ: Հին մարդուն, մեղքին մեռնինք որպէսզի կեանքի նորոգութիւնը ունենանք:

Բ. Ի՞նչպէս կարելի է կեանքի նորոգութեան մէջ պտըտիլ. — Տէրոջը կամքը այս է մեզի համար որ կեանքի նորոգութիւնը ունենանք, նաեւ զայն ապրինք: Ուշադրութիւն ընենք հոս գործածուած պտտիկ բառի մը. «պտըտիլ»։ Պտըտիլը կը ցուցունէ շարունակական տեւողութիւն մը. և Տէրոջը խօսքին մեզի տուած պատուէրն է կեանքի նորոգութեան մէջ պտըտիլ: Քանի որ Տէրը այս պատուէրը կուտայ, ըսել է անհրաժեշտ է զայն ընել. առանց անոր քրիստոնէական կեանք չըլլար: Ուստի տեսնենք թէ ի՞նչպէս կրնանք կեանքի նորոգութեան մէջ պտըտիլ:

1. Ասիկա կարելի է այն ատեն, երբ մեր անձերը մեղքի մեռած սեպելէ ետք՝ Աստուծոյ կեանքի կը սեպենք: Այսինքն մեր կեանքը այլեւս մեր պիտի չնկատենք մեր կամքին համեմատ ապրելու, այլ Աստուծոյ և Անոր կամքը ի գործ դնելու ենք: Պողոս առաքեալ այս գործնական կեանքի վկայութիւնն է որ կուտայ երբ կ'ըսէ, «Քրիստոսի հետ խաչը ելայ և ալ կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս»: Ասիկա իւրաքանչիւր հաւատացեալիս փորձառական կեանքը ըլլալով է որ կեանքի նորոգութեան մէջ պիտի պտըտինք:

2. Ասիկա կարելի է այն ատեն, երբ միշտ մեր երկրաւոր անդամները սպաննելու ետեւէ ենք: Ի՞նչպէս կեանքի նորոգութեան մէջ պտըտիլ կարելի պիտի ըլլայ, երբ հին մարդէն մնացած այսինչ բանը, որ Տէրոջը խօսքով տեսած ես թէ մէջդ կայ ու զայն չես սպաններ: Որքան անդամներ Տէրը մատը դրած է այսինչ բանին վրայ որ հին մարդէն է ու դուն զայն

ընդունած և խոստովանած ալ ես, բայց մեռցուած չես: Խոստովանական աղօթք մը ընելով մեռցուած չենք ըլլար. ինքզինքնիս չխաբենք, Աստուած ծաղր չըլլար: Մարմինի գործերը սպաննած կ'ըլլանք այն ատեն, երբ այլեւս զանոնք չենք կրկներ: Առնենք մէկը որ կ'ըսէ թէ կեանքի նորոգութեան մէջ կը պտըտի, բայց հայհոյութիւն, գողութիւն, մարդասպանութիւն եւայլն կ'ընէ. ի՞նչպէս կրնաս ընդունիլ ատանկ մէկին կեանքի նորոգութեան մէջ պտըտող ըլլալը: Նոյնպէս ալ երբ մէկը իր կեանքն է որ ի գործ կը դնէ, կամ իր մէջ ատելութիւն, հակառակութիւն, նախանձ, հպարտութիւն, ինքզինք ուրիշներէն լաւ սեպել, սիրոյ պակաս եւայլն կայ և զանոնք չվերցնէր, ի՞նչպէս կրնանք ըսել թէ կեանքի նորոգութեան մէջ կը պտըտի:

3. Կեանքի նորոգութեան մէջ պտըտիլը կարելի կ'ըլլայ ինքզինք մաքրելով: Աստուծոյ խօսքին մէջ շատ անգամ անձը մաքրելու յորդորի կը հանդիպինք: Մաքրուելու է անձէն, եսէն, մարմնաւոր խորհուրդներէն: Որքան յաճախ կը պատահի որ Տէրոջը փաստը պաշտպանելու քօղին տակ անձը, եսն է որ կը գործէ: Մենք մեզի շարունակ կրկնելու ենք, — Քանի որ Քրիստոսի կեանքը պէտք է երեւնայ իմ մէջս, ուստի այսինչ բանը Քրիստոսը կը պատկերացնէ:

Նաեւ նկատի առնենք որ ըսուած է «նորոգութիւն» և ոչ թէ նոր կեանք: Ասիկա իր մասնաւոր նշանակութիւնը ունի — այսինքն շարունակ նոր ըլլալու վիճակ մը. ամէն ատեն հինը վերցնելու և նորը տեղը դնելու ջանք մը:

Գ. Ինչո՞ւ կեանքի նորոգութեան մէջ պէտք է պտըտինք. — Այս ինչո՞ւ հարցման շատ մը պատասխաններ կան տալիք, որոնցմէ մի քանին միայն առնենք:

1. Նախ, վասնզի փրկութիւն ունենալուն բնական հետեւանքն է եւ պէտք է ըլլայ: Երբ Յիսուս Քրիստոս կ'ուզէ փրկել և կը փրկէ, ճիշդ հին մարդէն, մեղքէն ազատելու համար է, որպէսզի մեղքէն, անոր գերութենէն ազատ կեանքը ապրինք: Բայց եթէ կեանքի նորոգութիւնը չկայ, ըսել է տակաւին մեղքի գերութիւնը կայ: Մակայն գիտնանք թէ Տէր Յիսուս մեռաւ և յարութիւն առաւ որ մենք իրեն հաւատալով մեղքէն ազատ եղող կեանքը ապրինք:

2. Վասնզի եթէ նորոգութեան մէջ չենք պտըտիր, կամ նորին մէջ յառաջացուլ չկայ, ըսել է հինն է որ կը շարունակէ: Հոգեւոր կեանքի մէջ կայուն տեղ չկայ, եթէ յառաջ

չենք երթար, ետ կ'երթանք, եթէ Հոգիին գործերը չունինք, մարմինին գործերն է որ կ'ընենք: Զգաստ ըլլանք Հոգիով մարմինին գործերը քակելու, ինչու որ եթէ նորոգութեան մէջ չապրինք, դէպի մահ կ'երթանք:

3. Կեանքի նորոգութեան մէջ պէտք է պտըտինք, վասնզի ատով է որ Տէրը կը փառաւորուի: Ինչպէս ըսինք վերո, մեր կեանքը Տէրոջը պէտք է նկատենք. ուստի այնպէս պէտք է ապրինք որ Տէրոջը փառք բերենք: Պօղոս առաքեալ կ'ըսէ, «Ինձմով զԱստուած կը փառաւորէին» Դադ. Ա. 24: Կրնա՞ս ըսել թէ քեզմով ալ ուրիշներ զԱստուած կը փառաւորեն. խիստ լուրջ հարցում մըն է այս, որուն վրայէն թեթեւօրէն չըլլայ թէ անցնինք: Ինչո՞ւ Պօղոս առաքեալի համար ուրիշներ զԱստուած կը փառաւորեն. — որովհետեւ կեանքի նորոգութեան մէջ կը պտըտի, իր ապրած ամբողջ կեանքը Քրիստոսը կը պատկերացնէ:

4. Վասնզի ատով է որ պիտի կրնանք ուրիշներուն շինութիւն ըլլալ: Քննենք մեր կեանքերը խոնարհութեամբ և տեսնենք թէ շինութիւն կ'ըլլա՞նք ուրիշներուն: Տէրը Իր խօսքով կը պատուիրէ շինութեան ետեւէ ըլլալ. արդ, այս պատուէրը ո՞րքան իրականացուցած ենք մեր կեանքերուն մէջ: Եթէ շատերուն չէ, գոնէ մեր տան, մեր եկեղեցիին, մեր շուրջը եղողներուն որոնց հետ շարունակ յաբաբերութեան մէջ ենք, շինութիւն կ'ըլլա՞նք:

5. Վասնզի ասիկա Տէրոջը կամքը եւ պատուէրն է: Արդ, հարցնենք մենք մեզի թէ որքա՞ն Տէրոջը կամքին կը հնազանդինք, որքա՞ն Անոր պատուէրները կը կատարենք: Ոչ թէ խօսքով է որ Տէրոջը կամքին հնազանդած կ'ըլլանք, այլ մեր կեանքը պէտք է ցուցունէ: Ուստի Տէրոջը թափանցող խօսքին առջեւ քննենք ինքզինքնիս թէ կեանքի նորոգութեան մէջ կը պտըտի՞նք թէ ոչ և դիտանք Տէրոջը կամքը ի գործ դնել: Յարութեան տօնական օրերը թող այս գործնական նիւթերով զրադեցնեն զմեզ և զմեզ խորացնեն իր դիտութեան մէջ, իր յարութեամբը ապրելու Իրեն հաճելի կեանքը ու պտըտիլ կեանքի նորոգութեան մէջ:

Ի. Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ



Ի՞նչ ԲԱՆԻ ՎՐԱՅ

ԽՈՐՀԵԼՈՒ Է


Վերջապէս, եղբայրներ, ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքինութիւն եւ ինչ գովութիւն որ կայ, այն բաները խորհեցէք: Փիւ. Դ. 8

Ահաւասիկ մարդ մը, որ վտանգներով, խառնակութիւններով, թշնամութիւններով լեցուն կեանքէ մը վերջը, անուշ ու քաղցր խառնուածք մը պահած է: Աչքերը տակաւին յառած է անուշին ու գեղեցիկին: Ինչպէս որ փայլուն գոհարեղէն մը սեւ թաւշեայ տուփի մը մէջ ալ աւելի շողշողուն կ'երեւայ, նոյնպէս ալ այս համարը Առաքեալին արկածալից կեանքին մէջէն գոհարի պէս կը շողայ: Պօղոս ծերացած, անոր մարմինը տկարացած ու քամակը ծռած է. անիկա Հոգիմի անզուխ ատեանին առջեւ դատուելու կ'սպասէ, այսու հանդերձ կարող է այսպէս յորդորել: Ինչ որ սիրով է, այն բաները խորհեցէք: Ինձի կուզայ թէ երբ մարդիկ կը ծերանան, լաւատես չեն ըլլար ու փափուկ և սիրուն երեւոյթներով չեն զրադիր: Ծերութիւնը առ հասարակ թէ՛ մարմինը, թէ՛ միտքը կը պղտիկցնէ ու յոյսերու և գործունէութիւններու արգելք կ'ըլլայ: Սակայն Պօղոս Առաքեալ, որ մինչեւ իր չափահասութեան նախանձաւոր ու դժուարահաճ և խստապահանջ փարիսեցի մը եղած էր, այնքան փոխուած էր Աստուծոյ շնորհքովը, որ իր ծերութեան մէջ իսկ կը պահէր իր զուարթ տրամադրութիւնը ու ամէն հակառակութեան ընդդէմ Աստուծոյ զաւակի մը փառաւոր ազատութեամբը կ'ուրախանար:

«Այս բաները խորհեցէք»: «Այս բաները» կը ներկայացնեն քրիստոնէական չափահասութեան ազատութիւնը: Քրիստոնէի մը միտքը «այս բաներուն» տիրացած ըլլալու է: Անոնք թանկագին, ճոխ, բազմազան, շնորհալի ու ազնիւ հարստութիւններ կը ներկայացնեն:

Քննենք քրիստոնէական միտքի ազատութեան այս փառաւոր կարելիութիւնները:

«Ինչ որ ճշմարտութիւնով է»: Անիկա մեր դատաստաններուն մէջ պահանջուած ճշմարտութիւնը չէ: Հոն վկաններուն կը պատուիրուի որ



ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը ու միմիայն ճշմարտութիւնը խօսուի: Դատարանի մը առջեւ իբրեւ ճշմարտութիւն նկարագրուած բաները ընդհանրապէս տգեղ ու զգուելի են: Պօղոսի ականարկած ճշմարտութիւնը միշտ գեղեցիկ է: Դատարանի ճշմարտութիւնը իրականութեան համեմատ է, սակայն Նոր Կտակարանի մէջ յիշուած ճշմարտութիւնը Աստուծոյ համապատասխան է: Այդտեղ պատմութիւն մը կրնայ իրաւ ըլլալ, սակայն ճշմարիտ չըլլար երբեք: Միայն այն պատմութիւնը ճշմարիտ է, որ ճշմարտութիւնը եղող Փրկչին հետ նմանութիւն ունի: Միայն իրական բաներու վրայ խորհելու չենք, այլ այնպիսի իրականութեանց վրայ որ Աստուծոյ երեսը կը յայտնեն:

«Ինչ որ պարկեշտութիւնով է»: Բաներ որ պատուաւոր, ակնածելի ու պատկառելի են: Ինչ որ մարդը վստահելի ու պատկառելի նկարագրի մը տէր կ'ընէ, զայն խորհելու է:

«Ինչ որ արդարութիւնով է»: Մեր «արդար» բառը չի համապատասխաներ Պօղոսի «արդարութիւն» բառին: Մեր գործածած «արդարութիւն»ը կրնայ պողպատի պէս պաղ ըլլալ: Արտաքին ճշգրտութիւն մը միայն ներկայացնել: Ճշմարտապէս արդար ըլլալ, Աստուծոյ հետ ուղիղ ըլլալ կը նշանակէ: Ոչ մէկը որ իր Արարիչին հետը շտկուած չէ, կրնայ իրապէս արդար կոչուիլ: Ըսել կուզէ՝ ինչ որ Ամենակարողին չափին ու կշիռին գոհացում կուտայ, զայն խորհեցէք:

«Ինչ որ մաքրութիւնով է»: Մաքուր ըլլալ արդար ըլլալէ աւելի է: Մաքուր ըլլել կը նշանակէ անարատ, անմեղադրելի ու անբիծ ըլլալ:

«Ինչ որ սիրով է»: Խորհելու ենք նաև հաճելիին ու սիրելիին վրայ: Շատեր կը խորհին թէ կրօնքը ու անհաճոյ բաները իրարու հոմանիշ են և միայն անհաճոյ բաներու մէջ կրնանք ինքզինքնիստ ապահով զգալ: Օր մը դեռատի կին մը իր երէցին ցաւ կը յայտնէր որ իր կրօնական պարտականութեանց մէջ զանցառու գտնուած էր: Երէցը գիտնալով թէ յիշեալ կինը ճիշդ այդ պարագային անձնուրաց ու զոհաբեր նուիրմամբ իր չօրը կը ծառայէր, հարցուց թէ միթէ իր այդ ծառայութիւնը կրօնական պարտականութիւն մը չէ՞ր: «Ոչ», պատասխանեց մանկամարդ տիկինը, «այդ ծառայութիւնը այնքան ուրախութիւն կը պատճառէ ինձի ու այնչափ հաճոյք կուտայ իմ սրտիս, որ չի կրնար կրօնական պարտականութիւն մը նկատուիլ»: Ասիկա ամենէն սովորական ու վտանգաւոր սխալն է: Հարիւրաւոր ու հազարաւոր պարտականութիւններ կան որ հա-

ճելի ու քաղցր են և Տէրջը խնճոյքին մասնակցողներուն բաժին կ'իյնան:

«Ինչ որ բարի համբաւով է»: Ոչ թէ միայն բաներ, որոնց մասին լաւ կը խօսուի, այլ խօսակցութիւն մը որ ինքնին շնորհալի, գրաւիչ, հաճելի ու գեղեցիկ է: Յետոյ վախնալով թէ մի գուցէ այս գեղեցիկ ցանկէն բան մը մոռցած ըլլայ, Առաքեալը աւելի ընդարձակ իմաստ ունեցող ոճ մը կը գործածէ: «Ինչ առաքելութիւն և ինչ գովութիւն որ կայ»: Այսինքն ամէն ինչ որ յանձնարարելի է, փնտոցէք, գտէք, անոնցով հաճոյացէք ու զանոնք խորհեցէք: Ուր որ սիրուն բան մը կը տեսնէք, ձեր աչքերը անոր վրայ յստեցէք: Այսչափ ընդարձակ է հոգեւոր մաքի շրջանակը: Ուրեմն հետազօտութեան ելլենք: Այս սիրուն բաները փնտոնէք մարդկութեան, բնութեան և Տէր Յիսուս Քրիստոսի մէջ: Ու ամէն տեղ շնորհալի զիւտեր ընելով պիտի զարմանանք և փայլուն ստացուածքներու տիրանալով լուսոյ որդիներ ըլլանք:

Թարգմ. Ն. Մ.

=====

ԳԱՂՏՆԻՔԸ ՈՒՐԱԽ ԿԵԱՆՔԻՆ

(Քաղուած վեր. Ա. 2. եղոյեանի քարոզներէն)



Ի՞նչ է գաղտնիքը այս կեանքին: — Ուրախ ըլլալ անարգանքի ժամանակ: Այս կեանքը փնտոողները քիչ են, քանզի ատոր ճամբան է Աստուծոյ խօսքը Ֆանչնալ եւ զայն ընդունիլ:

Այս է գաղտնիքը հոգեւոր կեանքին, որ մեծ զոհաբերութիւն կը պահանջէ հաւատացեալներէ և քիչեր են որ մինչեւ վերջը կը յարատեւեն: ԶԱստուած ճանչնալու համար դարեր բաւական չեն: Սուրբ Հոգիով Աստուծոյ խօսքը սորվելու ենք. Յոր 12, 7. Սաղմ. 75, 4: Աստուած այս ամէն բաները կ'ընէ իմաստութեամբ և արդարութեամբ: Փափաքս է որ ամէն ալ զԱստուած ճանչնան և Անոր վստահին: Երկինքի մէջ մեր սորվելու ամենամեծ նիւթը Աստուած է, զԱյն ճանչնալն է:

Աստուած հաստատուն կը նշանակէ: Մովսէս ըսաւ, ի՞նչ է Քու անունդ. Աստուած ըսաւ, Ես եմ ՈՐ ԷՆ, է. բան մը չկայ որ Ան չէ, ամէն բան է, ամէն բանի մէջ է: Յարատեւ, ուրախ և պտղաբեր, խաղաղ կեանքի գաղտնիքն է զԱստուած ճանչնալ. Գ. Թագ. 22, 19:

Մեզի հասած բոլոր բաներն ալ Աստուծմէ են: Ուշադրութեամբ և հաւատքով կարդա Եսայ. ԽԵ

զլուխը: Լոյսն ու խաւարը ստեղծողը Աստուած է. Ամով. 3, 6. Յովնանու 4, 6-10, Մատթ. 10, 34: Առանց Աստուծոյ հրամանին տերեւ մը անգամ չչարժիր: Ան որ ասանկ կ'ընդունի, խաղաղութեան թագաւորութիւնն ունի իր սրտին մէջ: Ուրեմն լուսաբանուէ և սորվէ թէ — Աստուած ամէն բանելը բարիի գործակից կ'ընէ, Հո. 8, 28: Հետեւաբար Աստուած չար չկամենար մեզի, այլ մարդն է որ եկածին և Աստուծոյ սիրոյն հանդէպ սխալ դիրք բռնելով ատանկ կը խորհի: Թերահաւատութիւնը Աստուծոյ զաւակներուն անհաւատութիւնն է: Այսօր շատ կը հաւատաս, վաղը քիչ, պէտք է հաւատքդ յարատեւ և միապաղաղ ըլլայ: Աստուծոյ ճամբան մեզ խաւարին մէջէն անցնել է: Այս պատճառաւ զԱստուած ճանչցող մէկը չգայթակղիր:

Զնախանձիր, որ անօրէնները կը յաջողին:

2ի յուսահատիր, երբ նեղութիւններ կուզան իրարու ետեւ:

2ի տարակուսիր Աստուծոյ սիրոյն վրայ, Աստուած իր սիրածը կը խրատէ ու կը ծեծէ (փայտով). Հոով. 8, 35: Ո՞վ պիտի զատէ զիս Աստուծոյ սէրէն, տառապանքներ մօտ տանելու են:

Ամէն ատեն ամէն բանի համար գոհութիւն կը մատուցանէ Աստուծոյ: Կը հնազանդի Աստուծոյ, նոյնիսկ սիրեցէք ձեր թշնամիները խօսքին ալ:

Ամէն բաները Անով են: Ամէն:

Հաւաքեց՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Բաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԹԱԳԱՌՈՐԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ի սկզբանէ Աստուծոյ ծրագիրը այն էր որ ինքը — Աստուած, ըլլար թագաւոր և թագաւորութիւնը Աստուծոյ թագաւորութիւնը ըլլար, Բայց ստեղծագործութենէն մինչեւ Աբրահամի կանչուիլը, մարդիկ ուզեցին իրենք թագաւորել Աստուծոյ տեղ: Ընտրուած ազգին Իսրայէլի մէջ

անգամ, անմիջապէս որ անոնք Քանանու երկրին մէջ հաստատուեցան, Աստուծոյ թագաւորութիւնը մերժելով իրենց վրայ մարդ թագաւոր մը ուզեցին: «Եւ Տէրը Սամուէլի ըսաւ... անոնք... զիս կը մերժեն, որպէսզի անոնց վրայ չը թագաւորեմ», Ա. Թագ. Ը 7: Բայց հոգ իսկ Աստուած չէր կրնար թագաւորութիւնը բոլորովին մարդկային ձեռքերու յանձնել և ուստի Իսրայէլի մէջ հաստատուելիք թագաւորութեան և թագաւորական գերդաստանի մը նախահայրը պարտ էր ըլլալ «Աստուծոյ սրտին համեմատ մարդ մը». այս պատճառաւ Իսրայէլի մէջ թագաւորութիւնը Սաուլի անունով գերդաստան մը չեղաւ, հապա Դաւիթեան:

Այսպէսով թագաւորութեան նիւթը Հին Կտակարանին մէջ կարելի է երեքի բաժնել. —

1. Աբրահամի կանչուելէն առաջ աշխարհի վրայ եղած իշխանութիւնը. — ա. Ստեղծուածներուն վրայ տիրապետութիւնը առաջին մարդուն և կնոջ տրուեցաւ, Ծննդ. Ա 26, 28: Անկումով այս տիրապետութիւնը կորսուեցաւ և Սատանան «այս աշխարհի իշխանը» դարձաւ, Մատթ. Դ 8-10, Յովհ. ԺԴ 30:

բ. Ջրհեղեղէն յետոյ մարդկային կառավարութեան սկզբունքը հաստատուեցաւ Նոյեան ուխտին տակ, Ծննդ. Թ 1-2: Սուրբ Գրային տեսակէտով տակաւին այս է ազգերու բոլոր կառավարութեանց սահմանադրութիւնը:

2. Աստուածպետութիւնը Իսրայէլի մէջ. — Աբրահամի կոչումը իր մէջ կը պարունակէր, — ի մէջ այլոց — զատուած ժողովուրդի մը ստեղծումը, որուն միջոցաւ մարդկային սերունդին հանդէպ Աստուծոյ մեծ դիտաւորութիւնները պիտի գործադրուէին, Ծննդ. ԺԲ 1-3, Հոով. ԺԱ 26: Այս դիտաւորութիւններէն մին ալ տիեզերական թագաւորութեան մը հաստատութիւնն է: Իսրայէլի մէջ Աստուածային կանոնին գործադրութեան կարգը հետեւեալն է. —

ա. Մովսէսի միջնորդութիւնը, Ելից Գ 1-10, ԺԹ 9, ԻԴ 12:

բ. Յեսուի առաջնորդութիւնը, Յես. Ա 1-5:

գ. Դատաւորներու հաստատութիւնը, Դատ. Բ 16-18

Դատաւորները Իսրայէլի մէջ զանազան ցեղերէ մարդիկներ էին, որոնց ուսերուն կը դնէ Տէրը Իսրայէլի հաւատութեան և կորսուած վիճակին բերը: Դատաւորները մարգարէներուն հոգեւոր նախահայրերն էին, այսինքն մարդիկ գորոնք Աստուած Ինքը, (Աստուածպետութեան թագա-

ւորը) կը հանէր ազգին մէջ զԱստուած ներկայացնելու: Անոնք հայրենապետներ և կրօնական բարեկարգիչներ էին, որովհետեւ ազգային ապահովութիւնն ու բարգաւաճումը անբաժանելիօրէն Շնորհալի հանդէպ հաւատարմութեան և հնազանդութեան հետ կապուած էր: Այս ընտրեալ առաջնորդներէն ոչ մէկն ալ մարմնի կողմանէ պարծենալու որ և է մէկ բան չունէր: Գոթոնիէլ Քաղէքի պատիկ եղբոր որդին էր, Աւովդ ձախլիկ մարդ մը և մարդասպան մըն էր, Սամեզար գեղջուկ մըն էր եզներու խթանով պատերազմող, Դեբօրա կին մըն էր, Գէդէոն ամենէն պզտիկ ցեղէն աննշան ընտանիքի մը զաւակն էր, ևայլն: Ա. Կոր. Ա 27, 28ի մէջ յիշուած ամէն զառկարգերը կը գտնենք զատաւորներուն մէջ: Որդին Մարգոյ թագաւորութեան միջոցին Իսրայէլի վրայ Աստուածպետութեան շրջանին եղած զատաւորներու դրութիւնը պիտի վերահաստատուի, Եսայ. Ա 25, 26, Մատթ. ԺԺ 28:

Դ. Ժողովուրդին Աստուածպետութիւնը մերժելով՝ թագաւոր մը, Սաւուղը ուղեւորին, Ա. Թագ. Ը 1-7, Ժ 12-17:

Հին Կտակարանի եկեղեցին ներկայացնող, Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը չէր կրնար կառավարուիլ Սաւուղով, ուստի Տէրը «փոխեց» զայն և «Դաւիթը հանեց իրենց թագաւոր, որու համար վկայութիւն տալով ըսաւ, Յեռաէի որդին Դաւիթը գտայ իմ սրտիս համեմատ մարդ, որ իմ բոլոր կամքս պիտի կատարէ», Գ. Առաք. ԺԳ 22:

3. Դաւիթի ան Թագաւորութիւնը. —

ա. Դաւիթի Աստուածային ընտրութիւնը, Ա. Թագ. ԺԶ 1-13:

բ. Դաւիթեան ուխտին տրուիլը, Բ. Թագ. Է 8-16, Սաղ. 2Ժ 3, 4, 20, 21, 28-37:

գ. Դաւիթեան ուխտին մարգարէներուն կողմէ բացատրուիլը, Եսայ. Ա 25, 26, Զաք. ԺԲ 6-8:

Մարգարէները ապագայ Դաւիթեան թագաւորութիւնը հետեւեալ կերպով կը նկարագրեն. —

1. Ան պիտի ըլլայ Դաւիթեան, այսինքն պիտի հաստատուի Դաւիթի սերունդէն ժառանգորդի մը կողմանէ, որ կոչուէ պիտի ծնի, ուստի նա պիտի ըլլայ կատարեալ մարդ, բայց նաև «Էմամանուէլ», «Հօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, խաղաղութեան Իշխան», Եսայ. Է 13, 14, Ժ 6, 7, ԺԱ 1, Երեմ. ԻԳ 5, Եզեկ. ԼԴ 23, ԼԷ 24, Ովս. Գ 4, 5:

2. Թագաւորութիւն մը, որուն ծագումը, սկզբունքը և հեղինակութիւնը երկնային է, Դան. Բ 34, 35, 44, 45, բայց հաստատուած է

երկրի վրայ, իրեն մայրաքաղաք ունենալով Երուսաղէմը, Եսայ. Բ 2-4, Դ 3, 5, ԻԴ 25, ԼԳ 20, ԿԲ 1-7, Երեմ. ԻԳ 5, ԼԱ 38-40, Յովել Գ 4, 16, 17:

3. Թագաւորութիւնը պիտի հաստատուի նախ վերահաւաքուած, վերահաստատուած և ապա խառնած Իսրայէլի վրայ, և անկէ յետոյ պիտի զառնայ տիեզերական, Սաղ. Բ 6-8, ԻԴ 22, Եսայ. Ա 2, 3, ԺԱ 1, 10-13, Կ 12, Երեմ. ԻԳ 5-8, Լ 7-11, Եզեկ. Ի 33-40, ԼԷ 21-25, Զաք. Ժ 10, ԺԴ 16-19:

4. Թագաւորութեան բարոյական յատկանիշներն են արդարութիւն և խաղաղութիւն. ոչ թէ հպարտ՝ հապա հեզը պիտի ժառանգէ երկիրը, երկարակեցութիւնը հասարակաց պիտի ըլլայ և խիստ երկար տարիներ. Տէրը զիտութիւնը տիեզերական պիտի ըլլայ, զազաններուն վայրագութիւնը պիտի վերնայ, բացարձակօրէն ուղղութիւնը պիտի քաջալերուի և երեւան բերուած մեղքեր անմիջապէս դատաստանի պիտի հանդիպին, միևնոյն ժամանակ՝ աշխարհի բնակչութեան հսկայ մեծամասնութիւնը պիտի փրկուի, Եսայ. ԺԱ 4, 6-9, ԿԵ 20, Սաղ. Բ 9, Եսայ. ԻԶ 9, Զաք. ԺԴ 16-21: Նոր Կտակարանը Յայտն. Ի 1-5ի մէջ այս մասին մեծ կարեւորութիւն ունեցող մանրամասնութիւն մըն ալ կ'աւելցնէ, այսինքն՝ Սատանային մէջտեղէն վերցուիլը: Անկարելի է երեւակայել թէ մարդկութիւնը հոգեւոր, մտային և մարմնական կատարելութեան ի՞նչ բարձրութեանց պիտի հասնի զալիք այս արդարութեան և խաղաղութեան ոսկեգարին մէջ, Եսայ. ԺԱ 4-9, Սաղ. ՀԲ 1-10:


5. Թագաւորութիւնը պարտի հաստատուիլ զօրութիւնով և ոչ թէ համոզելով. անիկա պիտի հաստատուի աշխարհի հեթանոս ազգերուն վրայ զալիք Աստուծային դատաստանէն յետոյ, Սաղ. Բ 4-9, Եսայ. Ժ 7, Դան. Բ 35, 44, 45, Է 26, 27, Զաք. ԺԴ 1-19:

6. Իսրայէլի վերահաստատումը և թագաւորութեան հիմնուիլը կապուած են Տէրը ապագայ զաւրստի մը հետ, Բ 0ր, 6, 3-5, Սաղ. Բ 1-9, Զաք. ԺԴ 4:

7. Դաւիթի տան մէջ անհնազանդութեան համար վերապահուած պատիժը, Բ Թագ. Է 14, Սաղմ. 2Ժ 30-33. եկու գերութիւններով և աշխարհածաւալ ցրումով: Այն օրէն ի վեր, թէ և մնացորդ մը վերադարձաւ Զօրաբարէլ իշխանի առաջնորդութեամբ, բայց Երուսաղէմ հեթանոսաց գերիշխանութեան տակ եղած է: Այսու ամենայնիւ Դաւիթեան ուխտը չէ խափանուած, Սաղ. 2Ժ 33-37, հապա պիտի կատարուի, Գ. Առաք. ԺԵ 14-17:



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ



ԿԵՆ ԱՅ

ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԱՆԻԿԱ ԻՆՇԻՐ ԶԱՄԱՐ ԱԼ ՄԵՌԱԻ



Միսինար Տօքթ. Շալք հետեւեալը կը պատմէ: «Օր մը մեր հիւանդանոցը քիւրտ մը եկաւ որ տխուր դէմք մը կը կրէր: Անոր վրայ քննութիւն կատարելէ վերջ ստիպուեցայ անոր իմացնել թէ իր վախճանը մօտ է: Այն ատեն Ահմէտ արցունքներ թափելով ըսաւ, «Ես ձեր հաստատութեան պիտի չելլեմ մինչեւ որ դուք զիս դազադին մէջ դուրս չի հանէք: Ուրեմն զիս ինչ որ կ'ընէք ըրէք»: Այն համոզման եկայ որ Տէրը զայն մեր տունը առաջնորդած էր, որպէսզի անոր աւետարանը բերենք: Ահմէտ հետզհետէ ուժաթափ կ'ըլլար: Նա իբր մոլեռանդ իսլամ մը իր բոլոր ուժովը Աւետարանը լսելու հակառակեցաւ, սակայն օր մը լուր զրկեց որ իրեն Աւետարանէն կտոր մը կարդանք: Երբ Յիսուսի չարչարանքներուն հասանք, նա անկողնին մէջ նստաւ ու հարցուց, «Այս Յիսուսը իմ մեծ մեղքերուս համար ալ մեռաւ»: Երբ «այո՛» ըսուեցաւ, նա սկսաւ լալ: Երբ խաչին վրայի աւազակին պատմութիւնը կարդացուեցաւ, նա համոզուելով փրկութիւնը ընդունեց ու քիչ օրեր ետք խաղաղութեամբ յաւիտենականութեան անցաւ:



ՈՒՐ Է, ՈՎ ՄԱՆ, ՔՈՒ ԽԱՅԹՈՅԻ



Սուտանի կառավարիչ հաւատացեալ Զօրավար Կորտոն, օր մը Եթովպիոյ Յովհաննէս թագաւորին կողմէ ընդունուեցաւ: Թագաւորը բարձր աթոռի մը վրայ նստած էր և անկէ բաւական անդին ցած տեղ մը, աթոռ մը զրուած էր Կորտոնի համար: Սակայն Կորտոն իր աթոռը թագաւորին մօտը տանելով անոր քով նստաւ, իրեն հասկցնելու համար թէ ինքը իբր Եգիպտոսի ներկայացուցիչը չէր կրնար Եթովպիոյ թագաւորէն անարգ տեղ մը ընդունիլ: Այն ատեն թագաւորը անոր վրայ պոռաց ըսելով,

«Կորտոն փաշա, չէ՞ք զիտեր որ այս վայրկեանիս ձեզ կրնամ սպաննել տալ»: «Բնական է» պատասխանեց Կորտոն: «Գիտնալու ալ էք թէ ես մեռնելու պատրաստ եմ եթէ թագաւորին կամքը այդ է»: Թագաւորը յանկածակիի եկած «Ի՞նչ, մեռնելու պատրաստ»: Կորտոնի հանդարտ պատասխանը սա էր «Ես մեռնելու միշտ պատրաստ եմ: Թագաւորը այս կերպ զիս մեռցնելով ինծի միայն ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայ, քանզի այս կերպով ես ազատուած կ'ըլլամ ապագայ կեանքի բոլոր այն բարդութիւններէն, որոնք կրնան ինծի հանդիպիլ»: Թագաւորը ապշած անոր նայելով ըսաւ, «Ուրեմն իմ սպանալիքս քու վրադ ո եւ է ազդեցութիւն մը չընե՞ր»: «Երբեք» ըսաւ զօրավարը, վասնզի ինծի համար՝ ապրիլը Բրիտոս է, ու մեռնիլը՝ օգոստոս:

«Ո՛ւր է, ով մահ քու խայթոցդ, ո՛ւր է, ով գերեզման՝ քու յաղթութիւնդ»: Ա. Կորնթ. ԺԵ 55:



ԲԱՆՏԻ ՄԷՋ ԶԱՏԻԿ



Տիկին մը որ Մոսկուայի «Կէփէու»ի բանտերէն մէկուն մէջ մնացած էր, հետեւեալը կը պատմէ: «Երբ մեզ մերթ ընդ մերթ քանի մը բողոքի համար մեր խուցերէն դուրս կը հանէին, արտօնութիւն չունէինք ու եւ է ձայն մը հանելու: Անանկ լռութիւն մը կը տիրէր որ կարծես թէ ինքզինքնիս գերեզմանատան մէջ կ'զգայինք: Իրիկուն մը բանտի ընկերներէս մին փսփսալով ինձ ըսաւ, «Գիտես թէ վաղը ինչ է, վաղը Զատիկ է»: Ուրախութեան տօնը միթէ ա՞յսքան մօտեցած էր, միայն թէ մենք հոս անոր ո եւ է նշանը չէինք տեսներ: Բոլորովին լքուած և յուսահատ վիճակի մը մէջ, գոց դռներու ետեւ նեղանցքի մը մէջ կ'երթեւէկէի տխուր, խոր լռութեան մէջ յանկարծ աղաղակ մը բարձրացաւ, «Բրիտոս յարեաւ ի մեռելոց»: Ո՞վ համարձակած էր մեր զատկուայ ողջոյնը բացազանչելով այդ մահաբոյր լռութիւնը խզելու: Կին մը, իմ ընկերէս մին: Անոր աչքերը կը փայլէին: Առ ի պատասխան այս բացազանչութեան, բոլոր խցիկներէն աղաղակներ բարձրացան, թէպէտ տկար, դողացող ձայներով, սակայն եւ այնպէս ուրախութեամբ «Իրաւցնէ Տէրը յարութիւն առաւ»: Իմ ընկերուհիս — երիտասարդ աղջիկը քաշքշելով տարին, ու չորս օր ետքը կիկին

վերադարձուցին: Զատկուայ օրերուն զինք պաղ սենեակի մը մէջ բանտարկած էին, նա նիհարեցած էր և շատ աւրուած կ'երեւնար: «Սակայն ըսաւ նէ, բաւ է որ ես բանտին մէջ Զատկուայ աւետիսը տուի, ուրիշ և ո՛չ մէկ բան կարեւորութիւն չունի»:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՅ

Եկեղեցւոյ հայրապետներէն Սիրիլլօսի ժամանակ հեթանոսները մեռելոց յարութեան վարդապետութիւնը կը ծաղրէին ըսելով, «Եթէ մարդկային մարմինը՝ մեռած, փտտած և բոլորովին հողի վերածուի, ի՞նչպէս կրնայ նորէն յարութիւն առնել: Որքան նաւաստիներ ծովերու մէջ ձուկերէն կը կլլուին, որքան

ճամբորդներ անապատներու մէջ զազաններէն կը զիշատուին, որքան խեղճերու մարմինները արտերու մէջ թռչուններու կեր կ'ըլլան և այսպէս բոլոր աշխարհ ցիր ու ցան կ'ըլլան»:

Սիրիլլօս հետեւեալ պատասխանը տուաւ. «Յիշէ որ եթէ զանազան բոյսերու հունտերը ափիդ մէջ առնես, քու ձեռքդ բանալով զանոնք իրենց տեսակներուն համեմատ ընտրելու պիտի դժուարի՞ս ու պիտի շփոթի՞ս: Ուրեմն Աստուած որ քեզ իր ամենակարող զօրութիւնովը ստեղծած է, արդեօք ասկէ աւելին չի՞ կրնար ընել: Աստուած որ իր իմաստութիւնէն քեզի խելք տուած է, արդեօք ասկէ աւելին չի՞ հասկնար: Արդեօք նա իր ափին մէջ եղողը չի՞ կրնար ընտրել, կարգի դնել և վերաշինել»:

Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.



ՀՕՐՍ ՄԱՂԸ

Պուտաքեան ընտանիքին՝ եւ անկէ յետոյ ծանօթ բաժնուող սիրելիներու սուգին առթիւ, իմինս ալ մէջը ըլլալով:

Սեւ վարագոյր, սեւ սնտո՛ւկ...: Մահերգութի՛ւն ու Թախի՛ծ:
Ամէն սրտէ հեծօք մ'ահիա՛, եւ ամէն աչք արտասուք:
Ծըռած ծերեր, պարմաններ, տըղայք մատղաշ եւ անբիծ,
Դագաղ մ'անշուք, ուսամբարձ, փոս մը խորո՛ւնկ ու մեծ սուգ:

Այրի կինը՝ բազմանդամ ընտանիքին տիրուհի,
Շըշապատուած դալկադէմ՝ որբուկներով ծնրադիր.
Պահ մը անզուսպ հեծկըտուք ցաւին դիմաց ամեհի՛,
Պահ մ'ալ մորմոք ու հրծծի՛ւն, եւ լըռութիւն անյարիր:

Հուսկ ուրեմն կը բացուի վերջին կըտակն յեկնողին,
Աստուածաշունչ մ'հնամաշ իր բազմաշխատ էջերով,
Ուր՝ ամոքիչ խոստումներ աստղերու պէս փողփողին,
Ուր՝ կը յառին ամէնքն ալ սեւեռաբիւ աչքերով:

Պաշտամունքի պահն է ա՛րդ, ու կ'աղօթեն միամիտփ.
Կ'ողողուի տունն Աստուծոյ ներկայութեամբ սրբազան:
Սուգի տեղ՝ երգ ու անդորր, խաղաղութիւն եւ սփոփ,
Հաւատքն ընդհուպ կ'աղեղէ արցունքին մէջ ծիածան:

Ծառն կըտրեցին, բայց ահա՛, արմատները կ'ընծիւղին
Գըրաւջօրէն ուղղածիգ, դալարագեղ ու բեղուն.
Ծեր մարմինը տիպար հօր, յանձնընեցաւ ցուրտ հողին՝
Բայց իր հոգին կ'արծարծուի՝ տան կուրծքին տակ բաբախուն...

Տէրիք (Ճէզիրէ)

ՍԱՍՈՒԷԼ Պ.

Լուսաբանական

ՀԱՐՑ ԾԱԳՄԱՆՑ

Աստուածաշունչը միակ զիրքն է աշխարհի մէջ, որ ճշգրիտ լոյս կը սփռէ նախապատճառներու վրայ:

Մարդկային հետազոտութիւնները, նոյնիսկ ամենէն իմաստունները, կրնան մեզ անորոշութեանց կամ ենթադրութեանց առաջնորդել լոկ: Բայց Աստուածաշունչը կը խօսի մեզի առանց տարակարծութեան և հեղինակութեամբ:

Առնենք տիեզերքի ծագումին խնդիրը:

Ուրկէ՞ ծագած է եւ ի՞նչ պէս:

Որքան ներհուսն հատորներ գրուած են այս նիւթին շուրջ, սակայն որքան անիմաց և ապարդիւն:

Բայց Աստուածաշունչը կը լուծէ հարցը ամենապարզութեամբ, դրապէս, բանացիօրէն: Առաջին համարովն իսկ կը յարէ՝ «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց»: Տրամաբանութեան համար կա՞յ սակէ աւելի յստակ, խորունկ և պատշաճ ապացոյց մը: Ուրիշ անթերի բացատրութիւն չկայ այլեւս:

Մարդուն ծագման շուրջ:

Հոս ալ իրարու վրայ բարդուած հատորներով ներկայացուած բոլոր մարդկային վարկածները նոյն անորոշութիւնը կը ձգեն: Ոչ սակայն Սուրբ Մատեանը, որ ընդհակառակը, մարդուն ծագման մասին ամենէն զոհացուցիչ լուծումը կը ներկայացնէ: Պարզ, սակայն փառահեղ լեզուով մը կ'ըսէ ան, «Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը... արու և էգ ստեղծեց զանոնք»:

Ալ կարելի՞ է աւելի ազնուագոյն բացատրութիւն ակնկալել: Քանի որ այս կերպով հոգին վերադասուած և ազնուացած է, ուրե՞նք բանիմաց հետեւութիւնն այն է թէ Աստուածաշունչը ճշմարիտ է: Կա՞յ մէկը որ այս ծագումէն տարբեր մը մաղթէ:

Ո՞րն է այն գիտնականը, որ յաւակնի ինքզինքին վերագրել անասնական ծագում մը, նախընտրելով կապիկի մը կամ մարդ կապիկի մը աւելի կամ պակաս տարտամ նմանութեան հետախզումը իր մէջ, քան թէ համոզուելու թէ ստեղծուած է՝ բոլոր ստեղծագործութեան Արարիչ Սուրբին և Ամենահօգօրին պատկերովը:

Ինչո՞ւ Աստուածաշունչը մարդուն ծագումին վերագրած հաւաստումները գիտուններու ան-

վստահ հաւանութիւն ու անխառն խնդում չեն առթեր:

Ուրիշ հարց մը եւս, որ դարերով կնճռոտած և վրդոված է մարդկային մտածութիւնը, մեղքի եւ տառապանքի ծագումն է:

Այս երկուքն ալ գոյութիւն ունին: Հնար չէ ուրանալ:

Այս նիւթին շուրջ եղած բոլոր հեղինակութիւնները որ կրնային ընդարձակ մատենադարան մը կազմել, տխրօրէն հեռու մնացած են զոհացուցիչ և զործնական արդիւնքէ: Անոնց պակասած է փիլիսոփայական և բարոյական խորունկութիւնը, զոր ընդունելի պիտի ընէին տրուած վարկածները:

Սակայն, եթէ դառնանք Աստուածաշունչին, բոլոր փուլերով լուծուած է հարցը: Հոն կը սորվինք թէ մեղքը արդիւնքն է բարոյական ներկայացուցիչի մը ազատ ընտրութեան, զոր ստեղծուած և տեղաւորուած էր միջավայրի մը մէջ, ուր ամէն տեսակ պատեհութիւն կը ներկայանար վայելելու իր բարոյական մենաշնորհները և մարգելու իր յատկութիւնները:

Մէկը կրնա՞յ բացատրել մեղքին աշխարհ մուտքը տարբեր կերպով քան թէ բարոյական ներկայացուցիչի մը ազատ ընտրութեան հետեւանքով: Եթէ ընտրութիւնը ազատութեամբ չըլլար, ա՛լ հարկ չկար «մեղքի հարցին», մարդուն անկումը դաժան դատապարտութիւն մը պիտի ըլլար:

Մեղքը, իր մեղանշական նշանակութեանը մէջ, կը գործուի էակէ մը, որ իր մէջ ընտրելու կարողութիւնովն է օժտուած: Միակ զոհացուցիչ լուծում որ կայ՝ այս է:

Ուրիշ խնդիր մը, որ աշխարհի պատմութեան մէջ խոռվայոյց մտածութեանց պատճառ տուած է, փրկութեան հարցն է:

Մեղքը գոյութիւն ունի, անժխտելի է աս: Ուստի ինչպէ՞ս մարդ կրնայ ազատիլ անոր իշխանութենէն, մաքրուիլ անոր աղտերէն:

Ի՞նչ կենսական հարց: Ո՞վ լուծած է զայն:

Ոչ մէկ փիլիսոփայ, ոչ մէկ կրօնի հիմնադիր: Բոլորն ալ կոյրերու առջեւ կոյր խարխարողներ ու առաջնորդներ եղած են:

Սակայն՝ դիմելով Աստուածաշունչին՝ խնդիրը լուծուած կը գտնենք խորունկ, նմանապէս մատչելի ու պարզ կերպով:

Մարդը, մեղք գործելով, իր սուրբ Ստեղծի-

չէն անշատուած է բարոյական և հոգեւոր անդունդով մը, անդունդ մը որուն եզրը չկրնար խոյանալ որ և է անհատական միջոցաւ մը: Եւ անհրաժեշտ կամուրջը շինելու համար չունի որ և է ատաղձ:

Բայց Աստուած, Իր կատարեալ բարութեան, զօրութեան և իմաստութեան մէջ, Ինքն իսկ շինած է այդ կամուրջը: Նոյնիսկ Ան անցած է այդ կամուրջէն մեղսապարտ մարդը դիմաւորելու համար, երբ Ան Իր Միածին և յաւիտենական Որդին աշխարհ իջեցուց: Որդին, Յիսուս Քրիստոս, մինչեւ մեր ֆիզիքական բնութեանը զիջելով յանձն առաւ կատարելու այն Աստուածային օրէնքը, որ մենք սրբապղծեցինք, մինչ Աստուած անոր կատարեալ զործադրութիւնը կը պահանջէր խստիւ: Ու երբ Աստուածային բոլոր պահանջները իրենց զոհացումը գտան Որդւոյն մարդեղացած կեանքին մէջ, սրբութեան բոլոր յարմարութիւններով օժտուած Անոր մարմինը մեր մեղքերուն քաւութեան միակ յարմարագոյն պատարագն եղաւ խաչին վրայ: «Աստուած զանիկա որ մեղք չէր գիտեր, մեզի համար մեղաւոր (մեղք) սեպեց, որպէս զի մենք անոր միջոցաւ Աստուծոյ արդարներն ըլլանք», Բ. Կոր. Ե 21:

Եղեմի պարտէզին մէջ մեղանշող Ադամն ալ բարոյապէս անկարողութեան դատապարտուած էր իր անձնական միջոցներով մինչեւ զԱստուած կանգնելու, ճիշդ ինչպէս ձախողութեան դատապարտուած է հորը ինկող մարդու մը իր ոտքերէն գրկելով ինքզինք վերցնելու փորձը: Սակայն եթէ մարդը չէր կարող մինչեւ զԱստուած բարձրանալ, Աստուած կարող էր անոր ծով: Արդարեւ այս եղաւ Յիսուսի պաշտօնը երբ Աստուածութենէ մարմնի սահմաններուն տակ մտնելով մարդուն վերելքին փառաւոր գործն ըրաւ մարդն ու Աստուած մերձեցնելով իր անձին միջոցաւ: Ասոր համար, Յիսուս, Տէրը, նոր սերունդի մը, նոր ստեղծագործութեան մը գլուխն հանդիսացաւ, զոր Պօղոս առաքեալ «Վերջին Ադամը ու երկրորդ մարդը» կ'անուանէ (Ա. Կոր. ԺԵ 45-47): Առաջին Ադամը, Եղեմի մարդը, մեր թշուառութեան և պղծութեան առաջնորդն եղաւ, բայց Յիսուս Քրիստոս մեղքի գերութենէն մեզ Աստուծոյ փրկութեան առաջնորդող Պետը եղած է:

Եթէ ապաշխարութեամբ մեր մեղանշական Պետէն ինքզինքնիս խլած ենք, և վերանորոգմամբ ու հաւատքով կապուած մեր նոր Պետին,

այլեւս պիտի առաջնորդուինք յաղթութեան և յաւիտենական փառքի:

Էապէս փրկութեան սքանչելի ծրագիրը հոս կը կայանայ յայտնուած ներշնչեալ խօսքով ու կատարուած Յիսուս Քրիստոսով:

Կարելի չէր մեղքի և տառապանքի խնդրին լուծումին յղացումը մարդկային կարողութենէն ակնկալել: Աստուծոյ ձգուած էր կարգադրութիւնը ամենակարող ու բազումողորմ ըլլալուն համար: «Վասն զի Տէրոջը քով ողորմութիւն կայ ու Անոր քով շատ փրկութիւն կայ»:

Ո՛հ, օրհնենք զԱստուած այն ճշմարտութեան համար, որ շնորհքով գոյացած փրկութեան գործը մարդկային հետազօտութեան արդիւնքը չէ, այլ հաւատացեալ մարդուն մէջ կատարուած վերջին ակնկալութեան մը փորձառութեամբ կիրարկուած Աստուածային արձագանքը և կնիքը:

*
*
*

Արդ Աստուածաշունչի ներկայացուցած առեւանդներով կը մղուինք ըմբռնել ծագմանց կենսական հարցին գրաւիչ և հաստատ լուծումը:

Սոյն աւանդութեամբ, քանի որ Աստուած է ստեղծիչը այս տիեզերքին, ուրեմն ալ կրնանք ընդունիլ փոխան երկնային մարմնոց խօլ և չարաղէտ թաւալվորման՝ թէ խորհուրդ և նպատակ գրկած են անջրպետի բոլոր համաստեղութիւնները, իրենց բոլոր ստորաբաժանումներով, Արարիչի մը գերիշխանութեան տակ:

Տիեզերքի մէջ տիրող անխուսափելի միութեան սկզբունքը բացատրելու համար այս ընդունելութեան պէտք ունի գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը:

Իսկ զալով մարդ էակին, սուրբ Մատեանով վերահասու կ'ըլլանք անոր ամենէն գերազնուական սերումին, որու հետեւելով այլեւս մեզի տրամաբանական կ'ըլլայ ակնկալել որ մեղքի պատճառաւ նուաստացած մարդը՝ իր Արարչին կրկին միջամտող զօրութեամբ, զայն շնչաւոր էակ հանդիսացուցած էր անբան հողէն, պիտի վերականգնի իր բարոյական զարհուրելի գահավէժէն և պիտի բարձրանայ բացարձակ սրբութեան և անմահութեան:

Ամփոփեց Տ. Գ.

Շնորհքը հնազանդութեան զսպանակն է:
ԲԱՆԻՂ ՊԱՐԹ

ՃԵՅՄՕ

ՀԸՏՍԸՆ
ԹԵՅԼԸՐ

Ձ Մ Ե Ռ Ը
ՏՐԵՅՆՍԱՅՏԻ ՄԷՁ

«Պէտք է ինծի սենեակ մը գտնել ուր կրնամ նստիլ ու ելլել և պառկիլ, իմ կերակուրս պատրաստել ու ամբողջ շահածիս տասանորդը Տէրոջը նուիրել», մտածեց Ճէյմս Հըտսըն Թէյլըր առաւօտ մը: «Աւելի ժամանակ կ'ուզեմ առանձին Աստուծոյ խօսքը ուսումնասիրելու, աղքատներ այցելելու և կիրակի օրերը Աւետարանչական գործով անցնելու: Հոս մօրաքրոջս հանգստաւէտ տանը մէջ կ'ապրիմ, առատ ու լաւ ուտելիք ունիմ և անոր հաճելի ընկերակցութիւնը կը վայելեմ, սակայն այս կերպով չեմ կրնար Զինաստանի միսիոնարութեան գործին համար նախապատրաստուիլ: Տօք. Հարտի իմ կատարած աշխատանքս լաւ կը վճարէ, պէտք է կրցածիս չափ խնայող ըլլամ և ինչ որ կարելի է, ընեմ ինքզինքս ամենալաւ կերպով պատրաստելու օտար երկրի մը համար: Լոնտոն ըրած այցելութիւնս ինծի քաջալերութիւն ու նոր եռանդ պարգեւեց»:

Այս կարգի խորհուրդներով կ'զբաղէր օրէ օր մինչեւ որ Նոյեմբերի մէջ իր ծրագիրները իրականացան: Հըլլ քաղաքին անհաճոյ մէկ թաղին մէջ՝ երկու շարքի վրայ՝ դէմ դիմաց կարգ մը փոքրիկ տուններ կային, որոնց մէջ գործաւորներ կ'ապրէին: Այս երկու շարք բնակարաններուն մէջտեղ խոր փոս մը կար, որուն մէջ կը նետուէին ամէն տեսակ աւելցուքներ ու աղտեղութիւններ, որպէսզի նրբ փոսը ջուրով լեցուէր, հոսանքը աղտեղութիւնը քշէր, տանէր: Այս թաղին ու քաղաքին միւս մասին մէջտեղ պարապ հող կար, որուն մէջէն քանի մը խեղճուկ և գիշերները գէշ կերպով լուսաւորուած ճամբաներ կ'անցնէին ու վերը յիշուած փոսին միւս կողմը՝ ծուռ ու մուռ փայտէ կամուրջներու քով կը վերջանային: Այս տնակներուն ամէնն ալ միեւնոսն սեռութիւնն ու ձեւն ունէին: Իւրաքանչիւր տնակ դուռ մը և երկու պատուհան ունէր, պատուհաններէն մէկը միւսին վրայ: Ծայրի տանը դուռը խոհանոցին մէջ կը բացուէր, ուսկից սեպ տանդուխով մը վերի սենեակը կ'ելլուէր: Խոհանոցին ու վերի սենեակին մէջ կը բնակէր Տիկ. Ֆինչ իր գաւակներով, իսկ

վարի սենեակը, որ 12 քառակուսի ոտքէ աւելի քիչ տարածութիւն ունէր, Հըտսըն Թէյլըրի վարձու տրուեցաւ, որուն վճարած շաբաթական երեք շիլինը կը նպաստէր Տիկին Ֆինչի խեղճուկ եկամուտին: Պրն. Ֆինչ նաւաստի մը ըլլալով քիչ անգամ տուն կուգար ու անկանոն կերպով կը ղրկէր իր ընտանիքին ապրուստի դրամը:

Արդ մեր ապագայ միսիոնարը իրապէս ինքզինքը դժուարութեանց վարժեցնելու դիրքի մը մէջ կը գտնուէր, ինչ որ ըստ իր համոզման անհրաժեշտ նախապատրաստութիւն մըն էր իր ապագայ գործին: Վերաբուժանոցը երթալ գալու համար ստիպուած էր մութ ու անբնակ տեղերէ առանձին քալել: Ընտանեկան հաճելի շրջանակի մը չէր որ կը վերադառնար իրիկունները: Առանձին կը նստէր իր կրակարանին առջեւ: Կիրակի օրերը՝ առաւօտեան պաշտամունքէն վերջ առանձին կ'ացելէր իր թաղին հիւանդները և խօսքով ու դրամական օգնութեամբ կը մխիթարէր խեղճերն ու կարծտեալները: Ինք կը պատրաստէր իր կերակուրը որ զխաւորապէս կը բաղկանար վարսակի ալիւրէ, բրինձէ ու գորշագոյն հացէ: Կը զարմանար թէ որչափ քիչով կարող էր ապրիլ: Տեսնելով որ իր շահածէն մեծ մաս մը կրնար աւելցնել ուրիշներուն օգնելու՝ երջանիկ կ'զգար ու իր զոհաբերութիւնը անուշ կուգար իրեն: Այս կերպ կեանքը զինք աւելի մօտ շփման մէջ կը պահէր Տէրոջը հետ: Արդէն իր ներկայ ամենաբուռն կարօտը Աստուծոյ իրեն աւելի մօտ գալն էր, քանզի իր ամենափափուկ մարդկային զգացումները երկար ու հաճելի երազէ մը նոր արթնցած էին դառն յուսախաբութեամբ:

Մանկամարդ ու գրաւիչ ուսուցչուհի սը, որ երաժշտութեան դասեր կ'աւանդէր ու որուն Հըտսըն տուած էր իր սէրը, տեսնելով թէ ոչինչ կարող էր իր բարեկամին միսիոնարութեան նպատակը փոխել, վերջապէս իմացուց իրեն թէ ինք պատրաստ չէր իրեն հետ Զինաստան երթալու: Հըտսընի կսկիծը գրեթէ անտանելի էր: Այս դէպքը մեծ փորձութիւն մըն էր իր առ Աստուծոյ հաւատարմութիւնն ու սէրը ունեցած հաւատքին համար: Մատանան կը հարցնէր՝ «Իրաւացի կ'արժէ՞ այս ամէնը: Ինչո՞ւ պարտականութեան զաղափարականի մը համար ամբողջ կեանքդ գործով ու տառապանքով անցնես: Քանի դեռ ուշ չէ սիրունիդ շահելու, լքէ՛ զաղափարականդ: Դու ալ ուրիշներուն պէս կանոնաւոր ապրուստի մը ետեւէ եղիւր ու հայրենիքիդ մէջ Տէրոջը ծառայէ: Այս կերպով տակաւին կարելի է բարե-

կամուհիդ շահիլ»։ Հըտսըն օրերով սաստիկ տառապեցաւ. աղօթելէ հաճոյք չէր առնէր։ Բեռը օր ըստ օրէ կը ծանրանար։ Վտանգաւոր պարագայ մըն էր։ Անոր հաւատքը վարանեցաւ։ Թըշնամին հոսանքի պէս իրեն վրայ եկաւ։ Սակայն ալ բաւական էր, Աստուծոյ Հոգին Իր դրօշակը բարձրացուց Թշնամին ընդդէմ։ Հըտսըն ինքզինք նուաստացած ու հալած կ'զգար, բայց երբ Աստուծոյ մօտեցաւ ու Մեծ Բժիշկին ձեռքը Իրեն դպաւ՝ Անոր բուժիչ բալասանը ամփոքեց իր վէճը։ Կարող եղաւ իր քրոջը գրեւ «Թէպէտեւ Աստուած վիշտի զգացումն չառնէր ինձմէ, սակայն եւ այնպէս ինծի երգել կուտայ, Տէրոջ մով պիտի ուրախանամ, փրկութեանս Աստուծ մով պիտի ցնծամ»։

Երիտասարդ Հըտսընի սիրտը արդ ակելի բուռն տենչով մը կը վառէր իր ապագայ միսիոնարական գործին համար ակելի շատ պատրաստուելու։ Ինքն իրեն կ'ըսէր՝ «Երբ Զինաստան երթամ, որ եւ է մէկէ որ եւ է բան պիտի չի պահանջեմ։ Միմիայն Աստուծոյ պիտի ներկայացնեմ իմ պահանջներս։ Ուրեմն խիստ կարեւոր է որ Անգլիայէն մեկնելէս առաջ սորվիմ թէ ինչպէս կրնամ միայն Աստուծոյ ու աղօթքի միջոցով մարդիկ շարժման բերել։ Դիտէր թէ հաւատքն էր միակ ուժը որ կարող էր լեռներ փոխադրել, ամէն դժուարութեան յաղթել ու անկարելին ընել։ Սակայն արդեօք ինք ունէ՞ր այդ հաւատքը։ «Իր ունեցած հաւատքը բաւական պիտի ըլլա՞ր Զինաստանի մէջ իրեն հանդիպելիք դժուարութեանց մէջէն անցնելու։ Պիտի կրնա՞ր այն մեծ հեթանոս երկրին մէջ առանձին կանգնիլ։ Այսպէս կանգնած էր իր հայրենիքին մէջ»։ Այս մտածումներով զբաղած յիշեց թէ հաւատքը «աճող» պարզեւ մըն էր։ Դիտէր թէ Աստուծոյ այս պարզելը գէթ փոքրիկ չափով մը ունէր և անոր աճման գիտակից ըլլալու համար անհրաժեշտ էր իր արդէն ունեցած հաւատքը գործածութեան դնել։ Հաւատքը նաեւ միայն փորձութեանց մէջ կ'աճէր։ Արդեօք ինք խո՞յս կուտար այն ճամբայէն որով կարող պիտի ըլլար հասնիլ այն հաւատքին որ կրնայ միմիայն աղօթքի ու Աստուծոյ միջոցով մարդիկ շարժման բերել։ Ոչ երբէ՛ք։ Կ'զգար թէ իր մէջ արդելք մը չկար որ իր աղօթքներուն չի պատասխանուելու պատճառ ըլլար։ Միմիայն աղօթքի ու Աստուծոյ միջոցով մարդիկ շարժման բերելու նպատակակէտը իր աչքին առջեւ ունենալով՝ Հըտսըն սկսաւ նոր դասեր սորվիլ ու զանոնք գործադրել։ Ասոր հետեւանք եղան այնպիսի

փորձառութիւններ որ ամբողջ աշխարհի վրայ հազարաւոր մարդոց քաջալերութիւն բերած են ու տակաւին կը բերեն։

Հըտսընի բարերար գործատէրը, բազմազբաղ Տօքթ. Հարտի, յաճախ կ'ըսէր՝ «Յիշեցուր ինծի, երբ վճարմանդ օրը գայ»։ Սակայն Հըտսըն որոշեց միմիայն Աստուծոյ միջոցով բժիշկին յիշեցնել։ Այս մասին կ'ըսէ՝ «Երբ վճարման օրը մօտեցաւ, սովորութեանս համաձայն սկսայ կրկին ու կրկին աղօթել։ Վճարման օրը հասաւ, բայց Տօքթ. Հարտի որ եւ է ակնարկութիւն չըրաւ այդ մասին։ Աղօթքս շարունակեցի։ Օրեր անցան, սակայն բժիշկին միտքը չիկաւ իմ վճարումս։ Վերջապէս շարաթ իրիկուն մը՝ շաբաթական հաշիւներս մաքրելէ վերջ տեսայ թէ 75 սէնթի արծաթ դրամ մը միայն մնաց քովս։ Բայց մինչեւ այդ օր կարօտութիւն քաշած չըլլալով՝ աղօթքս շարունակեցի»։

Յաջորդ օրը որ Կիրակի էր, Հըտսըն երբ երեկոյին իր աղքատներուն հետ ունեցած ժողովը փակեց՝ մարդ մը իրեն գալով ըսաւ թէ իր կինը մեռնելու վրայ էր ու խնդրեց որ Հըտսըն իրեն հետ երթալով անոր համար աղօթէր։ Երիտասարդ քարոզիչը անմիջապէս յօժարեցաւ ու երբ միասին կը քալէին, իրեն ընկերացող մարդուն շեշտերէն հասկնալով որ ան Իրլանտացի էր, հարցուց թէ ինչո՞ւ քահանան կանչած չէր։


«Կանչեցի, բայց 18 բէննի պահանջեց գալու համար, ես այդչափ դրամ չունիմ. ընտանիքս արդէն անօթութենէ մեռնելու վրայ է», պատասխանեց մարդը մեծ յուսահատութեամբ։ Հըտսըն անմիջապէս յիշեց թէ 75 սէնթ միայն կար իր քով, ան ալ մէկ կտոր դրամ։ Ընթրիքի համար պնակ մը խաւիժ ու հետեւեալ առաւօտեան նախաճաշի համար բան մը ունէր ուտելու, սակայն կէսօրուան ճաշը ուսկից պիտի գար, չէր գիտեր։ Այս խորհուրդը չափով մը վրդովեց իր ուրախութիւնը ու սկսաւ մեղադրել մարդը որ փոխանակ քաղաքին օգնութեանը դիմելու ինքզինքը այս կարգի պարագաներու մատնած էր։ Մարդը պատասխանեց թէ՝ դիմած էր, սակայն նպաստի պաշտօնեան մինչեւ հետեւալ օրը առաւօտուն ժամը 11ին պիտի չկրնար գալ ու ինք կը վախնար թէ իր կինը առաւօտ չի հասած պիտի մեռնէր։

«Երանի թէ այս մէկ կտոր դրամին տեղ 2 շիլին ու 6 բէննի ունենայի, ո՞րչափ ուրախութեամբ այս խեղճերուն շիլին մը պիտի տայի», խորհեցաւ Հըտսըն։ Մարդը մութ գաւիթէ մը անցաւ։ Երբ Հըտսըն հասկցաւ թէ ուր կը գըտ-

կուէր, քիչ մը անհանգիստ եղաւ, քանզի իր վերջին անգամ ահա տեղէն անցնելուն՝ մէկը կոշտ կերպով վարուած էր իրեն հետ: Իր ձեռքի թերթիկները պատռած էր ու խստօրէն պատռերած որ անգամ մըն ալ հոն չ'երեւէր: Սակայն չըտարն պարտականութեան ճամբու մը վրայ կը գտնուէր: Թողունք որ ինք շարունակէ իր պատմութիւնը: Հըտարն կը պատմէ՝ «Մարդը ողորմելի սանդուխէ մը վեր ելլելով՝ խղճալի սենեակ մը տարաւ զիս: Հապա հոն ներկայացած տեսարանը: Չորս կամ հինգ փոքրիկներ ոտքի վրայ: Անոնց ներս անցած երեսներէն յայտնի էր թէ անօթութիւնը շուտով իր զոհերը պիտի պահանջէր: Ողորմելի մահիճի մը մէջ խեղճ, ուժասպառ մայր մը՝ 36 ժամուան մանկիկ մը իր կողքին: Մանկիկը կը հեծէր, կարծես լալու իսկ ոյժ չունէր»:

(Շարունակելի)

Թարգմ. Ն. Մ.



Ո՛Չ ՀԱՅՐ, ՄԻԱՍԻՆ ԿԸ ՄԵՌՆԻՆՔ

Flandersի մէջ, Կէնթի կամուրջներէն մէկուն վրայ արոյրէ երկու արձաններ կան: Անոնք կը ներկայացնեն հայր մը և որդին, և յուշարձանները կը ներկայացնեն իրենց փոխադարձ սիրոյն:

Քաղաքական լուրջ յանցանքի մը պատճառաւ անոնք երկուքն ալ կացինով գլխատումի դատապարտուած էին, բայց ժողովուրդին մէջ իրենց վայելած յարգանքը այնքան մեծ էր, որ դահիճ մը չգտնուեցաւ զանոնք գլխատելու:

Հետեւաբար ժամանակի կառավարութիւնը հետեւեալ տարօրինակ առաջարկը ըրաւ անոնց թէ՛ իրենցմէ մէկը կրնար իր կեանքը ազատել, միւսին դահիճը դառնալով:

Առաջարկը անձկալից հաճոյքով ընդունուեցաւ երկուքին կողմէ, վասն զի անոնցմէ իւրաքանչիւրը կը տեսնէր թէ գոնէ մէկ կեանք մը պիտի կարենար փրկուիլ, հօրը կամ որդւոյն:

Որդին կ'ստիպէր հայրը որ ընդունէր այն պայմանը, վասն զի ինք ուրախութեամբ կրնար

մեռնիլ, քանի որ այս կերպով հօրը կեանքը պիտի խնայուէր: Իսկ հայրը կ'ստիպէր որդին որ պայմանը ընդունի, քանի որ ինք ծերացած ըլլալով իր օրերը արդէն քիչ ատենէն վախճան պիտի գտնէին: «Դո՛ւն, որդի՛ս, երիտասարդ ես և երկար ապագայ մը կայ քու առջեւդ»:

Յուզումնալից թախանձանօք հայրը յաղթեց: Որդին ընդունեց: Գլխատման օրը հասաւ: Հոծ բազմութիւն մը հաւաքուած էր, տեսնելու այս անսովոր տեսարանը: Հոն էր գլխատման զարհուրելի կոճղը և ծանր կացինը: Հայրը և որդին ալ հոն էին, որոնցմէ մէկը միւսին կողմէ պիտի գլխատուէր:

Հայրը ծնրադրելով գլուխը կը դնէ կոճղին վրայ, սպասելով ճակատագրական հարուածին, որ իր ալեւոր գլուխը մարմինէն պիտի անջատէ: Որդին տօգոյն զէմքով և սեւեռուն նայուածքով մը կ'առնէ կացինը և դողդողուն ձեռքով կը վերցնէ զայն և մէկդի կը նետէ, ու իյնալով հօրը մերկ պարանոցին վրայ, որդիական արցունքներով կ'ողողէ զայն գոչելով, «ո՛չ, ո՛չ հայր, մենք միասին կը մեռնինք»:

Հոծ բազմութիւնը, որոնց զգացումները ծայր աստիճան չարուած էին, իրենց հիացումը արտաքայտեցին անզուպ ծափահարութեամբ, և անոնց համար ներում խնդրեցին: Խնդրանքը շնորհուեցաւ, բայց այդ սիրոյ արտայայտութիւնը խորհուրդ տուաւ արուեստագէտին տաղանդին, այդ փոխադարձ ազնիւ սէրը թանձրացեալ յուշարձանով մը ներկայացնելու:

Վերոյիշեալ սրտազրաւ և ազդեցիկ միջադէպը կը պատկերացնէ սէր մը զոր շատ ջուրեր չեն կրնար մարել և որ հեղեղներ չեն կրնար ընկղմել. (Երգ Երգոց 8. 7):

«Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար ունենալ, որ մէկը իր կեանքը բարեկամներուն համար դնէ». (Յովհ. 15. 13):


«Սակայն Աստուած իր սէրը, զոր մեր վրայ ունէր՝ յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ». (Հռոմ. 5. 8):

«Ամէն իրեն հաւատացողները իր անունով մեղքերու թողութիւն կ'առնեն». (Գործք. 10. 45):

«Ան որ Անոր (Քրիստոսի) կը հաւատայ, չը դատապարտուի, ան որ չհաւատար, անիկա արդէն դատապարտուած է»:

Բարեկամ, դուն ո՞ր կողմէն ես, գիտե՞ս:

ՅԻՍՈՒՍ ՎԷՄ ԱՆՍԱՍԱՆ



Եսայիայ 28 : 16

Թող գողան մորիկ, հանեն ալիքներ,
եւ ալեակք փոխուին դառնան կոհակներ,
Հինաւորք վէմը յաղթապանծ տեսքով,
Անյուզողդ կ'իշխէ «ես եմ» ըսելով:

Որքան ալ կատողին ալեակք փրփրադէզ,
Ու զարնուին վէմին փառապանծ ու հեզ,
Դարձեալ պիտ' քաշուին զայրացած տեսքով,
Ջի ալդ է պաշտօնի իրենց մեծ խրոփ:

Նոյնպէս աշխարհի իշխանն ու դեւեր,
Անհաւատք, ըմբոստ, կատղած ճիւղներ,
Կրնան մոռնել գողոււմ գոչումով,
Բայց իրենց վերջը նախանջն է անով:

Ջի «ես եմ» կ'ըսէ «Ալֆան օմէղան»
Սկիզբն ու վերջը արքայից Որքան,
Յասպիսով պատած ամբողին նստած,
Արդարութեան սուրն իր ձեռքը առած:

Սուրբ Աստուածորդւոյն ռաքերն շափուղայ
Երբ որ տեսնուին յեռներուն վրայ,
Երբ գոչէ վերէն յանկարծ ձայն մ'ահեղ,
Պիտ լըռեն տարերք մարդիկ խելայեղ:

Վա՛յ մեզի, անա հոս կը կորսուինք,
Պիտ' գոչեն մարդիկ հիմայ ո՛ւր փախչինք,
Դրժոխքն անուիկ երախն իր բացած,
Հո՛ս, հ'ոս, պիտ' գոչէ, տեղ եմ պատրաստած:

Գառնուկն իր սուրբերն աջ կողմը առած,
ձերմակ լուսափայլ զգեստներ հագած,
Նոր երգ պիտ' երգեն սուրբ քնարներով,
Գառնուկին երգը, փա՛ռք, փա՛ռք գոչելով:

Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

Սէնթ-Անթուան


Հաւատք ըսել է, տեսնել զայն, որ Աստուած կը
տեսնէ, գիտնալ զայն, որ Աստուած գիտէ, հաշուել
անով՝ որ Աստուած կը հաշուէ:

ԲԱՐՆԱՆՈՒՄ



ՄԱՆԿԱՆՑ

ԳՈՂԳՈԹԱՅԻ ՀՐԱԻԵՐԸ



Ի Դողգոթա, որպէս փարոս
Անմահութեան ալ յորդահոս,
Կանգնած է խաչն անխախտ նըշան,
Փրկչին սիրոյն անզուգական:

Հոն կը հոսէ արեան հեղեղ,
Կողէն խոցեալ Գառին անմեղ:
Թէ ծարաւ ես, շուտ հո՛ն դիմէ
Ու կենսաբուղիս ակէն խրմէ:

Տե՛ս, քու փրկիչդ հոն քեզ համար
Կըրեց վիշտեր, խի՛ստ անհամար,
Սրտանմիկ մահուամբը իր
Քաւեց մեղքերդ աղէտաբեր:

Բազկատարած քեզ կըսպասէ.
Ո՛վ մեղաւոր հրաւերն լըսէ,
«Եկո՛ւր ինծի, ո՛վ խեղճ հոգի»
«Ես մշտափոս ակն եմ կեանքի»:

Մի՛ դանդաղիր, օ՛ն շտապէ,
Փրկչիդ հրաւերն շո՛ւտ ընդունէ,
Մի՛ ըսեր դեռ «Ժամանակ կայ»,
Րոպէն ձեռքդ չէ: Վախճանն կուգայ:

Ս. ԳԱԼԱՅՃԵԱՆ

Ո՛չ մի խօսք, միայն մէկ բառ անհամբեր՝
անխորհուրդ,
Բայց անա ան՝ լուսաշող՝ պայծառ օր մը
կը մթնցնէ:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԱՄՈՒԷԼ ԵՂԲ. ՊԱԳԳԱԼԵԱՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Ը



Մինչ կը մտամփոփուիմ Ձերանայէն Միջագետք ըրած ուղեւորութիւնս տեղեկագրելու, սիրտս ծանրաբեռնուած կը գտնեմ զանազան յուշերով, մին միւսէն աւելի քաղցր ու նուիրական: Հարկ է սակայն խոսսափիլ անձնական մանրամասնութիւններէ: Այս պատճառաւ իսկ որոշեցի Պան տը Լա Ռօզի եկեղեցիներուն մէջ ըրած շրջանէս, Լիոնի մէջ՝ ձեռնադրութեանս պահուն և ի Հակընօ, Ա. Շ. Օ.ի միսիոնարական տօնին առթիւ ստացած պատուական տպաւորութիւններս զանց առնել: Վերապահելու եմ նաև շատ մը բարեկամներու վերջին տեսակցութենէն քաղած յիշատակներս, որոնց վրայ՝ առանձնութեանս խնկաւէտող ծաղիկներու պէս կը գուրգուրամ:

Ա.

Ե՛րբ Երիս. կոչմանս գիտակցեցայ

Պարտաւոր եմ նախ՝ շատերու կողմէ յղուած այս հարցման պատասխանել: Տարիներ առաջ, որպէս ուսանող Սուրբ Գրոց դպրոցի, Զուիցերիա կը գտնուէի: Հոն(*) դպրոցի թմբիներուն տակ զբօսանքի պահերուն, ներսէս եղբօր հետ ունեցած մեր յաճախակի խօսակցութեան նիւթն էր «Մուհամէտական դաշտերուն աւետարանումը»: Անկասկած, շատ մը հայ հոգեւոր գործաւորներ նոյն միտքն ու նպատակը ունեցած են: Անշուշտ քրտինքով, արցունքով և արիւնով օծուն գերագոյն ճիգեր եղած են այս ուղղութեամբ: Սակայն մենք, անգիտակ այդ անլուր մարտիրոսացումներուն, սրտցաւ կը մեղադրէինք մեր ազգը որպէս անպարտաճանաչ իր Միսիոն. կոչումին: Ապա, կը վճռէնք մենք մեզի համար, հնազանդի մեր «Երկնային կոչման»: Կ'որոշենք մեկնիլ ու ընդհալ այս նպատակին իրազօրծմանը, ամէն գնով, երբ և ուր որ Տէրը մեզ զրկէ: Ծիշդ այդ շրջանին Ա. Շ. Օ.ի սիրելի տնօրէնին Տօքթ. Berronի այցելութիւնը կ'ընդունինք: Իր հոգեկան առաքաստներն ալ նոյն նպատակին բացուած էին և նոյն տեսիլքը զինք կը մղէր: Կը

հարց ու փորձէ մեզ: Տեսնելով որ ազգային պատասխանատուութեան հետ անհատական կոչման գիտակցութենէն ալ բռնուած ենք արդէն, կը մեկնի մեծապէս քաջալերուած: Ընկերս ներսէսը, իր ուսման շրջանը աւարտելուն պէս կը չուէ Սուրիա: Իսկ ես կը մնամ Ձերանայ, ժամանակ մը աշխատելու այն դաշտերուն մէջ, ուր Հոգին զիս ծնաւ, սնուց ու մարգեց Տէր Բրիստոսի ծառայութեանը համար: Իմ մեկնելուս հարցն ալ քանիցս կ'ուզայ սեղանի վրայ, ու միշտ կը յետաձգուի: Այսօր, Նախախնամական կը նկատեմ այդ յետաձգումները, քանի որ ի վերջոյ, արաբախօս դաշտերուն դիմաց, քրթախօս գերիներու աւետարանչութեան հարցը կը բացուի: Եւ այս՝ խորապէս կը յուզէ զիս: Գիտակից էի թէ այսպիսի ժամանակներու մէջ, ի՞նչ կը նշանակէ այդ ժողովուրդին աւետարանչութեան ընդունումը: Տէրը սակայն, անվերապահօրէն նուիրուելու պատրաստակամութեամբը զրահաւորած էր զիս արդէն: Ամէն ի՞նչ արագ և վճռապէս կը կարգադրուի: Կը մնար սպասել ելքի ազդանշանին:

Բ.

Հրաժեշտի պահը

Ուրբաթ օր, 23 Սեպտ. ժամը 14ին նաև կը մտնենք քոյր Աննամարի Պէքի հետ. (վերջինս, ինք ալ նոյն գործին պատրաստուելու համար, երուսաղէմ կ'երթայ արաբերէն և տեղական գիտելիքներ սորվելու): Օդը անուշ է: Մեզ ճամբեցնելու եկող սիրելիները այնքան մօտ կեցած են նաևուն, որ կարծես կամ մեզի հետ նաև մտնել, կամ մեզ դուրս քաշել կ'ուզեն: Վերջին վարկեաններն ալ կը սահին: Ժամը 12 է: Նաւը կը շարժի: Ոմանք կուլան, ուրիշներ կը ժպտին մեղամաղձոտօրէն: Զեռք, զլխարկ, թաշկինակ օդին մէջ կը շարժին միշտ աւելի արագ: Ու ես հրաժեշտի այդ ամենազոթուար արարողութիւնը կը դիտեմ ապակիացած աչքերով: Դեռ ոչինչ կ'զգամ բաժանումի խայթումով: Կը հեռանանք: Ա՛յ ոչինչ կը մնայ մեզի բայց միայն ծովը, երկինքը, ճերմակ, աղուոր ծոցերը և հեռո՛ւն, աղօտօրէն բնանկարող ծովախորշերը սիրելի երկրին:

Գ.

Ծովագնացութիւն

Ճաշի ատեն է: Յետոյ արագ խուցս կը վազեմ: Նաւը լեցուն է բազմութեամբ: Բայց ես այնքա՛ն մինակ կ'զգամ ինքզինքս: Հրաժեշտ

(*) Vennes s/Lausanne, «Emmaüs».

տուող, սակայն անքակտելիօրէն սրտիս կամրջուող հոգիներուն ու վայրերուն կարօտը կը սկսի խոցել զիս: Զգողական օրէնքին պէս անդիմադրելի քաջողականութիւն մը զիս ետ կը մղէ: Սիրտս կ'ուռի պայթելու աստիճան: Շարժապատկերի արագութեամբ աչքերուս առջեւէն կը տողանցեն Ֆրանսա մուտքս, հացի տքնանքը, ապաշխարողի և նորադարձի տազնապներս, եկեղեցին՝ «Զօրս տունը», Վէնի ուսանողական օրերս, վերադարձս: Ահա՛ այն դաշտերը ուր աշխատեցայ: Էջերը տուայտանքիս: Ահա՛, հոգեւոր մշակի առաջին քրտնոտ ու արցունքոտ պայքարներու դիմաց յուզումն ու ժպիտը առաջին պտուղին, երգն ու հրճուանքը առաջին յաղթանակին: Ահա՛ ան, որ զիս Փրկչին առաջնորդեց: Անոնք, որոնց սիրտը ինծի տուն և իմինս իրենց հայրենիք եղած էր: Լալու անհուն պէտքը կը պրաւէ զիս: Կտակի պէս նուիրական անոնց վերջին խօսքերը դեռ կը կրկնուին ականջներուս: Դուրս կը վազեմ: Համայնակուլ խաւարը իջած է արդէն: Վերը սակայն՝ երկինքի բարձրութեան մէջ կը փալիլան աստղերը Աստուծոյ խոստումներուն պէս: Կը մտաբերեմ Ծննդոց 15: 5ը: Աստուած հաւատարիմ և ամենակարող է: Սիրտս կը հովանայ: Մահիճ կը դառնամ սա աղերսանքը շրթներուս, — «Ո՛վ Տէր, գուցէ ամենաթանձր մթութեամբ ծածկուած գտնեմ այն դաշտերը, ուր կը զրկես զիս: Օգնէ ինծի սակայն, միշտ, սեւեռարիք Քու աստղացոյ խոստումներուդ յառելու: Ու եթէ վիճակի ինծի առանց «աստղերու նմանող սերունդը» տեսնել ու ննջել, թող գէթ մահամերձիս բարձը Հո. 4. 20-24ը ըլլայ»:

Յաջորդ օր քոյրը կը հարցնէ, — Ինչպէ՛ս կարելի էր անխռով կենալ այդքան թաց աչքերու դիմաց: Լեզուիս վրայ էր Գործ. 24. 13ը: Բայց ես ինծի չեմ թուլատրեր այդ: Որպէս պատասխան, բաւական կը սեպեմ Սիամանթօյէն հոգեկան վիճակս ճշգրտութեամբ արտայայտող սա հատուածը, զոր թարգմանաբար տուի. —

Թարթիչներս կը թրջուին արտասուքի կաթիլներով,

Բայց չեմ ուզեր զանոնք թափել,

Կանգ մի՛ առնեմ սրբաթոռիչ երիվար,

Նըպատակս տկարութիւն չի ճանչնար...:

Ծովագնացութեան ընթացքին ընթերցումը քաղցր է: Սակայն զանց չըրի նաև տեսակցիլը հրեայ երիտասարդներու, կաթոլիկ կղերներու և Ֆրանսիսքեան քոյրերու հետ, որոնք բաւական մեծ թիւ մը կը կազմէին նաւուն մէջ: Ընդհանրապէս հոգեւոր խնդիրներու շուրջ կը դառ-

նար մեր խօսակցութիւնը: Պապականներու հետ գրեթէ անկարելի է ունէլ յատակ ելքի յանգիլ: Անոնց բոլոր ըսածները կրնանք սապէս բանաձեւել. — «Որքան հիանալի է ձեր իւրաքանչիւր համոզումը Սուրբգրական համարներով հաստատելը, նոյնքան տխուր է, եկեղեցական ասանդութիւններուն և վարդապետութեանց շուրջ ձեր պահած լռութիւնը կամ հերքումը»:

Տեսած հրեաներս, խորաթափանց, վարպետ տրամաբանող և անխոնջ վիճողներ էին: Ահա անոնց եզրակացութիւնը մօտաւորապէս. — «Մեր հայրերը անկասկած մեծ սխալ մը գործեցին Յիսուսը խաչելով: Սակայն հասկնալու ենք զանոնք: Քաղաքական և կրօնական լուրջ պատճառներ ունէին անոնք: Յիսուս՝ իր կեանքով, գործերով և վարդապետութեամբ իտէալ կեանքի յայտնութիւնն է: Ան՝ ոչ միայն մեր հայրերուն համար անժամանակ ու անմարսելի էր, այլ արդի քաղաքակրթութեան և քրիստոնէայ կոչուող ազգերուն ալ բարոյական տարողութեան խիստ վեր է: Մեր հայրերուն առջեւ ելքի երեք ճամբայ կար միայն: Կամ պատուել և թողուլ որ ազատ գործէր, կամ համոզուիլ և աշակերտ դառնալ ինչպէս ըրին ոմանք, և կամ մէջտեղէն վերցնել զԱյն: Որովհետեւ առաջինը՝ ազգային կործանում ու երկրորդը՝ Մովսիսականութեան շնորհմը պիտի նշանակէր, երրորդը անխուսափելի դարձաւ: Այսու հանդերձ, ներկայիս հրեութեան բանիմաց մասը կը պարծի աշխարհիս Անոր պէս դէմք մը տալուն համար: Անկասկած Յիսուս եզակի մարդն է, բովանդակ մարդկութեան մէջ ամենաիտէալ մարդը, բայց ոչ Աստուծոյ որդին»:

Յաճախ ալ կը դիտէի ամբարը և անցքերուն վրայ թխմուած Ափրիկեան խեղճ գինուորները: Մե՛ղք որ անոնց լեզուն չէի գիտեր, գէթ ոմանցը Փրկչին վրայ խօսելու համար: Անոնք իրենց ամբողջ ժամանակը կ'անցնէին մերթ բոլորովին մանկական և ծիծաղաշարժ կատակներով, մերթ ալ ամենատեղ ու վատաբարոյ պարերով: Սակայն Ա. և Բ. կարգերը զրաւող քաղաքակրթութեան մեծապատիւ դասերը պակաս ողբալի վիճակի մէջ չէին բարոյապէս:

Ծովը մէկ անգամ միայն ճամբորդները չարչարելու աստիճան չարացաւ: Այլապէս՝ օդը փառաւոր էր միշտ և ծովագնացութիւնն իս հմայքով լեցուն:

(Շարունակելի)



ՍԱՄՈՒԷԼ Պ.

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St. - Savournin Marseille

Ի Մ ԲԱՐԵԿԱՄ Ս

Փրանտերէնէ՛ 3. ն. 2.



1. Բարեկամ մը ես ունիմ
Սիրովն հաւատարիմ,
Մեղմիւ շեշտով կանչէ ներս
Մեղմիւ շեշտով կանչէ ներս:
Ինք մեր վրայ հսկէ յար
Սիրով մը անգագար,
Բարեկամ մ'է՛, օգնական
Այսօր և յաւիտեան:

2. Ճարտար մի ղեկավար է,
Կ'ուզղէ եւ կը վարէ
Կեանքերն մեր սր տատանին
Մոլորին մէջ ովկեանին:
Միակ հսկիչ աշաղուրջ
Որ երբ տեսնէ մեր շուրջ,
Թաւալին գոռ ալիք սէգ
Կ'ըսէ, «Հանգարտեցէ՛ք»:

3. Լուսաւոր նաւահանգիստ,
Ուրախ սրբոց տուն միշտ.
Ուր ալ գոռումն փոթորկի
Ընդմիշտ մեզմէ դադրի:
Ալ պիտ' չըլլայ արցունք հոն,
Ցնծում տիրէ միայն.
Ձի մեղք պիտ' չըմտնէ հոն,
Սուրբ են փրկչին նրման:



ՊՕՄՈՆ - ԼԱ ՌՕՋԻԷՐԻ ՀԱՅ ԱԻՆՏ. ՄԱՏՐԱՆ ՆՈՒԻՐՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Մարտի 1-ի Զայ Աւետ. եկեղեցիին համար Մարտ 5-ի Կիրակին կրկին նշանակելի օր մ'ըն էր: Այդ օրը կանխուած Ծանուցուածին համաձայն տեղի պիտի ունենար համայնաբար Պօմոն — Լա Ռօճիէր արուարձանի նորակառոյց Մատրան նուիրումը: Շէնքը իր մտքութեամբն ու զուարթ դիրքովը կ'արծես իրեն քաշել կ'ուզէր ժողովուրդը: Ամէն ինչ յարմարութեամբ եւ ճաշակասար պատրաստուած, կ'սպասէր ժամուն:

Երկուքն է ժամը եւ արդէն ուրիշ արուարձաններէ եւ քաղաքէն ժողովուրդը կը հասնին հետզհետէ, եւ կը հաւաքուին Մատրան պարտէզի շրջափակին մէջ, որպէսզի դուռը բացուելուն պէս յարմար տեղ մը գտնեն:

Ժամը 3ին 10 րոպէ մնացած դուռը բացուեցաւ, ուրկէ ներս կը մտնէր Ա. Շ. Օ. ի տնօրէն եւ Ֆրանսաձայ Աւետ. եկեղեցիներու Comité Executif-ի նախագահ Տօթթ. Պէռօն, որուն կը հետեւէր ժողովուրդը: Տասը րոպէէն արդէն սրահը լեցուած էր, այնպէս որ մէկ կողմի պատուհանները եւ մեծ դուռը բաց ձգուեցան, որպէսզի դուրսը մնացողներն ալ կրնային մասնակցիլ ժողովին: Ժամը ճիշդ երեքին փառաբանական երգով մը, աղօթքով եւ աւուր պատշաճ ընթերցումներով եկեղեցւոյս Հովիւը բացաւ հանդէսը: Առաջին անգամ խօսք արուեցաւ ֆրանսական Reformée եկեղեցւոյ նախագահին, Pasteur Kaltenbach-ի, որ Հայ եկեղեցիին եւ ֆրանսական Բող. եկեղեցիին միջեւ զուգահեռական գծեր ցոյց տալով, ներկայացուց հայ ժողովուրդին մէջ եռանդն ու ստեղծագործ զօրութիւնը, ինչպէս նաեւ խոր անկեղծ հաւատքը, զոր նա իրեն հետ բերաւ մինչեւ Ֆրանսա, Տէրջը շնորհքով անայլմամբ հոս ալ փայլելու եւ ուրիշներուն օգտակար ըլլալու, ինչպէս մինչեւ այսօր տեսնուած է:

Քանի մը վայրկեանի մէջ եկեղեցւոյս Հովիւը պատմական ըրաւ Մատրան շինութեան եւ ներկայացուց այս շինութեան ձեւնարկին անհրաժեշտութիւնը: Անիկա մասնաւոր շնորհակալութեամբ յիշեց Վեր. Մ. Կ. Փափազեանի Փափազեան հիմնադրամէն Մարտէլի շինու-

թեանց համար զրկած 500 տօլարը, որուն 250ը հոս գործածուած էր եւ մնացեալ 250ը գործածուելու վրայ է Սէնթ-Անթուանի սրահին շինութեան գործին մէջ:

Երկրորդ եւ գլխաւոր խօսողն էր Տօթթ. Պէռօն, որ իր արտաբերւած շունչով եկեղեցիին ներկայացուց այն նոր տեսիլքները, որոնց համաձայն հաւատացեալները պիտի ունենային ընդարձակ ստպարէզ Աստուծոյ թագաւորութեան մեծ գործին մէջ գործակիցներ ըլլալու Անոր Սակայն այս մեծ գործին մէջ ուղիղ կերպով շարունակելու համար եկեղեցին պէտք ունի զօրութեանց Ակնի, Իր խօսքը հիմնելով Սաղմ. ԼԶ. 7-10 համարներով վրայ, վերջացուց զանոնք Աստուծոյ թագաւորութեան քաղցր գործին լծուողներուն ներքին գոհունակութիւնն ու անոնց սպասող յաւիտեանական ուրախութիւնը նկարագրելով: Յուցուց թէ Մարտէլի եկեղեցին այդ գործին մէջ կը գտնուի ո՛չ միայն իր գտնուած տեղին մէջ, այլ

նաեւ իր երկու դաւաններուն միջոցաւ հեթանոս ազգերու մէջ ի Հալէպ եւ ի Ճիզիրէ, եւ կը մաղթէր որ այս տեսիլքը միշտ վառ պահուի անոր մէջ, դեռ շատ ուրիշ պատգամաբերներ զրկելու օտար երկիրներ: Նուիրման արարողութիւնն ու աղօթքը արտասանեց եկեղեցւոյ Հովիւը եւ յետոյ խօսք տուաւ Մարտէլի Հայ Առաք. եկեղեցւոյ առաջնորդ փոխանորդ Ժերմանազարդ Տ. Կարապետ քահն. Երեւանեանի, որ քանի մը վայրկեան յոտնկայս ունկնդրող ժողովուրդին ջերմ եւ սրտագին խօսքերով ինքնակցութիւն յայտնեց Մատուին շինութեան առթիւ եւ մտադրեց որ անիկա Աստուծոյ տունն ըլ-



լալով խիստ շատերու օրհնութիւն եւ խաղաղութիւն, կեանք ու աւուրջութիւն գտնելու անլն ըլլալ: Ապա արտասանեց պահպանիչը, որմէ յետոյ Ծանուցումներով եւ վերջին օրհնութիւնով փակուեցաւ հանդէսը: Երգչախումբը գեղեցիկ ու յաջող երգերով հանդէսին մասնաւոր փայլ մը տուաւ: Այս երջանիկ օրուան համար փառք եւ գովութիւն ըլլալ մեր Հօրը Տէր Թիսու Քրիստոսի անունով:

ՆԵՐԿԱՅ ՄԼՂ